«Հետաքննող լրագրողներ» հ/կ

Ծրագրի անվանումը՝

«Համայնքի ունեցվածքը՝ համայնքի բնակիչներին»

Հետազոտության հեղինակ՝ Սառա Պետրոսյան

ք. Երեւան

Իրականացման ժամկետը՝ 01.09.2013թ.-30.11.2013թ.

*Սույն հետազոտությունն իրականացվել է Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի աջակցությամբ: Հետազոտության բովանդակությունը, արտահայտված տեսակետերը եւ կարծիքները պատկանում են **«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ին** եւ հնարավոր է, որ չհամընկնեն Ա.Դ.Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոնի տեսակետերի հետ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Հետազոտության նպատակը, խնդիրները եւ մեթոդաբանությունը	5
Իրավիճակի նկարագրություն՝ ըստ համայնքների	7
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք	7
Գեղարքունիքի մարզի Սեւան համայնք	15
Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնք	26
Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք	31
Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնք	38
Եզրակացություն	45
Առաջարկություններ	51
Օգտագործված գրականության ցանկ	53
Հավելված 1	54

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինները ձեւավորվեցին 1996թ.-ին, սակայն մեկ տասնամյակից ավելի կարեւորություն չէր տրվել համայնքներում տեղական ինքնակառավարման վարչարարության բարելավմանը: Պատշաճ ուշադրություն չէր դարձվել հարկերի հավաքագրմանը, առավել եւս հավաքագրված գումարների ծախսումներին: Համայնքների ճնշող մեծամասնությունը համայնքի ղեկավարի ապաշնորհ ղեկավարման եւ անվերահսկելիության պատճառով բյուջետային պարտքեր էր կուտակել, իսկ պաշտոնավարման շրջանն ավարտելուց հետո համայնքի ղեկավարն ու նրա աշխատակազմը դիմում էին դատարան՝ չվճարված տարիների աշխատավարձերը գանձելու պահանջով: Համայնքների ողջ ունեցվածքը ԴԱՀԿ որոշումով արգելանքի տակ էր գտնվում: Տարածքային կառավարման նախարարության պլանավորված քաղաքականության արդյունքում մի քանի միլարդ դրամ կազմող բյուջետային պարտքերը մարվեցին վերջին 5-6 տարիների ընթացքում:

Միաժամանակ, Տարածքային կառավարման նախարարությունն (ՏԿՆ) իր քաղաքականության կարեւորագույն մասը դարձրեց համայնքներում հարկերի հավաքագրումը՝ ընթացիկ հավաքագրումների հետ միաժամանակ ապառքների մարումը: Այդուհանդերձ, քանի որ տարիների ընթացքում չվճարված հարկերից գոյացած ապառքների ամբողջական մարումն անհեռանկարային էր, նախարարությունը Կառավարությանն առաջարկեց օրենսդրական փոփոխություններով չեղյալ համարել մինչեւ 2008թ.-ը առաջացած ապառքները: Այդպիսով, համայնքներին հնարավորություն տրվեց կազմելու ողջամիտ բյուջե եւ իրենց վարչարարության կարեւորագույն սկզբունքը դարձնել հարկերի հավաքագրումը՝ ապահովելով 100 տոկոսանոց ցուցանիշ:

Հարկերի հավաքագրումը խթանելու համար մարզպետների տարեկան գործունեության գնահատման չափորոշիչների սանդղակում առաջնային համարվեց մարզում ՏԻՄ-երի հարկահավաքման ցուցանիշը՝ այդպիսով խթանելով նրանց ներգրավվածությունը հարկերի հավաքագրմանը:

Կառավարությունը Ազգային ժողովին ներկայացրեց օրենսդրական մի փաթեթ, որով պետք է դուրս գրվեին համայնքների բյուջեներում հողի հարկի եւ գույքահարկի մասով կուտակված ապառքները կամ նվազեցվեին դրանց ծավալները (օրենսդրական փաթեթն իր մեջ ներառում էր՝ «Գույքահարկի եւ հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» ՀՀ

օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները): 2012թ. մարտի 21-ին խորհրդարանը վավերացրեց ներկայացված նախագիծը, որի կիրառումն սկսվեց 2012թ. օգոստոս ամսից: Ըստ այդմ, չեղյալ համարվեցին մինչեւ 2008թ.-ը համայնքային բյուջեին ունեցած հողի եւ գույքահարկի պարտքերը: Սակայն ուսումնասիրություններից պարզվեց, որ հետագայում համայնքային բյուջեներում հողի եւ գույքահարկի ապառքները շարունակվեցին կուտակվել ոչ ճիշտ վարչարարության եւ հարկահավաքման հստակ քաղաքականություն չորդեգրելու պատճառով:

ՏԿՆ պահանջը համայնքներից շարունակվում է մնալ նույնը՝ ապահովել հարկերի հավաքագրման 100%-ոց ցուցանիշ, սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ քիչ համայնքներ են կարողանում հարկերի հավաքագրումն ապահովել ամբողջությամբ, մնացյալը դա ապահովում են ընթացիկ ապառքների որոշակի տոկոսների հավաքագրումների հաշվին:

Տարածքային կառավարման նախարարության քաղաքականության մաս է կազմում նաեւ համայնքային բյուջեները սեփական եկամուտների հաշվին մեծացնելը,որն առաջին հերթին ակնկալվում է համայնքի պահուստային ֆոնդի հողատարածքների եւ գույքի վարձակալությունից ստացվող եկամուտներից, համայնքային գույքի օտարումներից եւ տեղական տուրքերից ակնկալվող վարձավճարներից: Այդ ոլորտում Կառավարության աջակցությունը համայնքներին այն եղավ, որ մատչելի գներով դիզվառելիք ու պարարտանյութ տրամադրի բնակչությանը՝ շահագրգռելով հողագործությամբ զբաղվելը, ինչպես նաեւ համայնքներում մասնավոր տնտեսական գործունեությունը խթանելու համար 2012թ. ընթացքում փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքում, որոնք որոշակի հստակեցումներ մտցրեցին որոշ տեղական տուրքերի տեսակների անվանումներում եւ դրույքաչափերի մեջ, ինչպես նաեւ ընդլայնեցին դրանց շրջանակը:

Իրականացված հետազոտությունը նպատակ ուներ պարզելու, թե ինչպիսի ազդեցություն ունեցավ ՏԿՆ քաղաքականությունը համայնքային բյուջեների վրա, համայնքների աշխատակազմերը որքանով են բարելավել իրենց վարչարարությունը եւ այն ինչ ներգործություն է ունեցել համայանքային բյուջեների վրա: Մասնավորապես, համայնքների ղեկավարները գործադրում են բոլոր հնարավորությունները համայնքի բյուջեում սեփական մուտքերն ավելացնելու համար:

1. Հետազոտության մեթոդաբանությունը

Նպատակը եւ խնդիրները

«Հետաքննող լրագրողներ» կազմակերպության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համայնքների ղեկավարները ոչ միայն հետեւողական չեն համայնքի ունեցվածքը նպատակային օգտագործելու հարցում եւ շատ հաճախ անտեսում են համեմատաբար բյուջետային ավելի մեծ մուտքեր ապահովելու հնարավորությունները: Արդյունքում, տասնամյակներ շարունակ, տեղական բյուջեն աճ չի արձանագրում, իսկ համայնքների ղեկավարներն իրենց անգործությունն արդարացնում են մշտապես մատնացույց անելով աղքատիկ բյուջեն՝ «համայնքում զարգացման ծրագրեր չեն կարող իրագործել, որովհետեւ գումար չունեն»:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են մոդելային **5** համայնքների ֆինանսական կարողությունները մեծացնելու հնարավորությունները եւ այդ ուղղությամբ համայնքի ղեկավարության իրականացրած վարչարարությունը:

Ծրագրի խնդիրն է՝ պարզել, թե

ա/ ծրագրում ներառված համայնքների տեղական բյուջեն ինչ աճ է արձանագրել վերջին 5 տարիներին եւ որքան կարող էր լինել այն՝ ճիշտ վարչարարություն իրականացնելու պայմաններում:

Ըստ այդմ ուսումնասիրվել է՝

բ/ ընտրված համայնքներում հարկերի եւ տուրքերի գանձման քաղաքականությունը,

գ/ բյուջեի մուտքերն ավելացնելու համայնքի կարողությունները եւ այդ ուղղությամբ համայնքի ղեկավարության իրականացրած քաղաքականությունը,

դ/ բացահայտել համայնքների սեփական եկամուտների՝ հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի եւ վճարների գծով ապառքների առաջացման պատճառները:

Կիրառված մեթոդաբանությունը.

ա/ հարցումներ ընտրված մոդելային համայնքների ղեկավարներին, պետական եկամուտների կոմիտեին՝ համայնքների գույքացանկին, բյուջեի հավաքագրման ցուցանիշներին, համայնքում առկա տնտեսվարողների քանակին, տեղական տուրքերի հավաքագրման ցուցանիշներին եւ անհրաժեշտ այլ տեղեկությունների ծանոթանալու նպատակով:

բ/ հարցազրույց համայնքի ղեկավարի եւ համայնքի ղեկավարի աշխատակազմի հետ,

գ/ հարցազրույց համայնքների բնակիչների հետ,

դ/ պաշտոնական փաստաթղթերի, համայնքների, մարզպետարանների վիճակագրական տվյալների ու այլ փաստաթղթերի ուսումնասիրություն եւ վերլուծություն,

ե/ համայնքների պաշտոնական կայքերի ուսումնասիրություն,

զ/ տեղեկատվության հավաքագրում այլ աղբյուրներից,

զ/ կիրառվող օրենսդրության ուսումնասիրություն:

Հետազոտության նպատակն իրագործելու համար իրականացվել են հետեւյալ գործողությունները՝

- ուսումնասիրվել, վերլուծվել եւ գնահատվել են համայնքների բյուջեների կատարման ցուցանիշները,
- ուսումնասիրվել է համայնքների կիրառած հարկային քաղաքականությունը,
- ուսումնասիրվել եւ վերլուծվել է ընտրված համայնքներում կիրառվող հարկային վարչարարությունը,
- ներկայացվել է եզրակացություններ ու առաջարկություններ ՏԻՄ-երի բյուջեների սեփական մուտքերն ավելացնելու հնարավորությունների եւ գանձման ուղղությամբ կիրառվող հարկային վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ:

Մոդելային համայնքներ. հետազոտությունն իրականացվել է Գեղարքունիքի մարզի 5 համայնքներում՝ Գավառ, Սեւան, Նորատուս, Վարդենիկ եւ Սարուխան:

Համայնքների ընտրությունը կատարվել է հետեւյալ չափանիշով՝

Գեղարքունիքի մարզի նշված 5 համայնքները ռեսուրսների, բնական պաշարների, բնակչության թվաքանակի եւ տնտեսական հնարավորությունների առումով զարգացում ապահովելու անհամեմատ մեծ հնարավորություններ ունեն:

Յուրաքանչյուր մոդելային համայնքից հարցազրույցին մասնակցել են ՏԻՄ-երի 3-5 ներկայացուցիչներ (համայնքի ղեկավար, տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ֆինանսական, բյուջետային եկամուտների գանձման բաժինների պետեր եւ/կամ մասնագետներ, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ):

3. Իրավիճակի նկարագրություն՝ ըստ համայնքների

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

Տեղական բյուջեի աճին վերաբերող իրավիճակը

Ըստ քաղաքապետարանից ստացված տեղեկատվության՝վերջին 5 տարիներին համանքի բյուջեն սեփական եկամուտների գծով արձանագրել է շուրջ 33%-ի աճ՝ ի հաշիվ չվճարված հարկերից գոյացած ապառքների հավաքագրման: Վերջին 3 տարիներին համայնքում գործունեություն ծավալող տնտեսվարողների թիվը չի ավելացել: 2013թ.-ին նրանցից երկուսը, որոնք նախկինում զբաղվել են հեղուկ վառելիքի վաճառքով, դադարեցրել են իրենց գործունեությունը:

Միաժամանակ, Գավառ քաղաքային համայնքի բյուջեում առկա ապառքները 2013թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 245 մլն 969,2 հազար դրամ (հաշվարկը կատարել է «Քաունթերփարթ ինթերնեշնլը»):
Գույքահարկ շենք-շինություններից՝ 81 մլն 380,1 դրամ,
գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 64 մլն 823,0 դրամ,
հողի հարկ-97 մլն 408,1 դրամ,
տեղական տուրքեր՝ 80,000 դրամ,
այլ եկամուտներ (հողի վարձավճարներ)՝ 2 մլն 278,000 դրամ:

Հարկերի հավաքագրմանն ուղղված աշխատանքները.

Գավառ քաղաքային համայնքի պահուստային ֆոնդի գյուղնշանակության հողերի վարձավճարները 2011թ. եւ 2012թ.-ին գանձվել են մասնակի: Քաղաքապետարանի աշխատակազմում վստահեցնում են, որ ապառքները հավաքագրելու համար հետեւյալ միջոցներն են կիրառում՝

1. ծանուցագրեր են ուղարկվում վարձակալներին,
2. քաղաքապետարանի աշխատակիցներն այցելում են նրանց,
3. հարկատուներին հրավիրում են քաղաքապետարան,
4. այլ խնդրով քաղաքապետարան այցելողներին պարտավորեցնում են վճարել հարկերը:

Քաղաքապետարանի աշխատակազմում հարկահավաքման դժվարությունները պայմանավորում են նրանով, որ վարձակալների մի մասը հողը վարձակալելուց առ

ժամանակ հետո հեռացել է Հայաստանից: Կան նաեւ վարձակալներ, որոնց ծանուցել են վարձավճարները վճարելու մասին եւ սպասում են արձագանքի:

Դատական հայցեր չեն ներկայացվել անպարտաճանաչ հարկատուների դեմ, որը պատճառաբանվում է հետեւյալ կերպ.

ա/ մի մասն անվճարունակ է՝ «շատ չքավոր են, նույնիսկ տարվա հարկը չեն կարողանում վճարել»:

բ/ տեղային գործոնով պայմանավորված՝ «մենք դատական պրոցես չենք սկսի՝ քյավառցին-քյավառցու դեմ 200-300 հազար դրամի համար դատարան չի գնա»:

Քաղաքապետարանը հարկերը հավաքագրելու մեխանիզմներ չի մշակել եւ օրենքով նախատեսված միջոցառումները հետեւողականորեն չի կիրառել հարկերը հավաքագրելու համար: Գավառ համայնքում 2013թ. օգոստոսին Գեղարքունքի մարզպետարանի վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբն արձանագրել է, որ համայնքի ղեկավարը պատշաճ կարգով ծանուցագրեր չի ուղարկել վարձակալներին՝նախորդ տարիներից մնացած ապառքները գանձելու համար: Բացառությամբ մեկ տարի առաջ «Քաունթերփարթ ինթերնեշնլի» հետ իրականացրած մի ծրագրի, որի շրջանակում **«Վճարեք տեղական հարկերն ու տուրքերը՝ ունեցեք բարեկեցիկ համայնք»** կարգախոսով թերթիկներ են բաժանվել հարկատուներին, նրանց զգուշացնելով հարկերը չվճարելու հետեւանքների մասին, միաժամանակ բացատրել են, որ նրանց վճարած հարկերով կարող են աշխատանքներ իրականացնել համայնքում: Արդյունավետությունը նկատելի է եղել՝ «փորձը ցույց է տալիս, որ հետեւողական աշխատանքի արդյունքում անպայման արդյունք լինում է»:

Համայնքային բյուջեն սեփական եկամուտների հաշվին մեծացնելու հնարավորությունները

Գավառ համայնքը հողային մեծ ռեսուրսներ ունի, որը նրա բյուջեն համալրելու հիմնական միջոցներից մեկը կարող է լինել, սակայն նրա չնչին մասն է օգտագործվում: Քաղաքապետարանը հողերը վարձակալության տալու մասին հայտարարությունները տարածում է տեղական «Քյավառ» հեռուստատեսությամբ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի միջոցով՝ բնակչությանն այդ մասին իրազեկելու համար: Քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացմամբ՝ բնակիչները հողեր վարձակալելու շահագրգռվածություն չունեն, բացառությամբ մի քանիսի, որոնք վարձակալական հողերն ավելացնելու ցանկություն ունեն եւ անձամբ են դիմում համայնքային իշխանությանը:

Արդեն 10-ը տարի է սեփականաշնորհված հողակտորները համայնքին վերադարձնելու միտում կա: Համայնքն ունի 5100 հա վարելահող

, որի 40%-ը վերադարձվել է, մնացած 60%-ն էլ չի մշակվում: Հողերից հրաժարվելու, հետեւաբար նաեւ հարկերը չվճարելու պատճառներ են նշվում՝

- Համայնքի բնակիչների 30%-ը հեռացել է հանրապետությունից,
- ընտանիքի աշխատունակ անդամների մեծ մասը դրսում է, իսկ տարեցները հնարավորություն չունեն հողը մշակելու,
- երբ ծանուցագիր են ուղարկում հողի պարտքը վճարելու մասին, որոշ պարտքատերեր, ովքեր չեն մշակում եւ ֆինանսական խնդիրներ ունեն՝ ցանկանում են հողը վերադարձնել, որպեսզի պարտքեր չկուտակեն,
- հողակտորը նրանց եկամուտ չի ապահովում, բայց զրկում է նպաստ ստանալու հնարավորությունից, ուստի վերադարձնում են, որպեսզի ստանան տարեկան 300 հազար դրամ ընտանեկան նպաստը:

Նույնն են պատճառները նաեւ վարձակալած հողակտորների դեպքում: Վարելահողերը վարձակալում են մինչեւ 25 տարի ժամկետով, սակայն ավելի վաղ դադարեցնելու դեպքեր են լինում: Համայնքում կարծում են, որ 25 տարին շատ երկար ժամկետ է վարձակալության համար, հաճախ վարձակալողը տարվա կեսին արտերկիր է մեկնում, եւ դրանք մնում են անմշակ: Քանի որ վարելահողերը վարձակալության տալու համար պետական գրանցում են ստանում, նույն կարգով էլ հողը պետք է վերադարձնեն համայնքին՝ նոտարական վավերացում, կադաստր, որը հավելյալ ժամանակ է պահանջում աշխատակազմից եւ լրացուցիչ ծախսեր է առաջացնում համայնքային բյուջեում:

Աղյուսակ 1: Գավառ համայնքի պահուստային ֆոնդի հողատեսքերը

Բնակավայրի հողեր	1481.8
Արդյունաբերական, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության	172.6
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	60.8
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	348.6
Հատուկ նշանակության հողեր	4.45
Անտառային հողեր	
Ջրային հողեր	21.6
Ընդամենը	18105.1

Գավառ համայնքն ունի 2 տեսակի արոտավայրեր՝ համայնքամերձ եւ հեռագնա: Հեռագնա արոտավայրերը բնակավայրից մոտ 30 կմ հեռավորության վրա են գտնվում, որը, նրանց ասելով՝ վարձակալելու ցանկություն ունեցողներ չեն եղել: Ամենաշատը բնական խոտհարքներն են վարձակալում, որովհետեւ ներդրում չի պահանջվում, իսկ վարելահողեր կան, որ սեփականաշնորհումից հետո չեն օգտագործվել եւ դարձել են արոտ: Հեռագնա արոտավայրերը նույնպես վարձակալության տրամադրելու հնարավորություններն իրական են համարվում, այն հաշվարկով, որ 1 գլուխ կովին 1 հա արոտ է անհրաժեշտ, իսկ համայնքամերձ արոտների քանակը չի բավականացնում:

Համայնքի 6067,94 հա արոտավայրերից վարձակալության է տրվել ընդամենը 788,4 հա-ը: Չնայած այն հանգամանքին, որ անասնագլխաքանակը, հատկապես կաթնատու կովերի գլխաքանակը, Գավառում ավելանում է:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը՝ 5682,
Մանր եղջերավոր անասունների քանակը՝ 3730:

Անասնագլխաքանակի ավելացումը բացատրվում է կաթի իրացման խնդիրը լուծելով, որը շահագրգռել է մարդկանց անասնապահությամբ զբաղվելու հարցում: Անցած տարվանից «Մարիանա», «Թամարա» եւ «Անի» կաթնամթերքների գործարանները կանոնավոր կաթը մթերում են: Համայնքում խոշոր ֆերմերային տնտեսություններ չկան, տնտեսությունների ունեցած առավելագույն անասնագլխաքանակը՝ 10-15 հատ է:

Բնակիչների մեծ մասն անասունները հանձնում է նախրապանին, սակայն քաղաքապետարանը նախրապանից արոտներն օգտագործելու համար գումար չի գանձում: Արոտների դիմաց վարձավճար են գանձում այն անհատներից, ովքեր իրենց մի քանի կովն են արածացնում: Քաղաքապետի աշխատակազմում կարծում են, որ Կառավարությունը չպետք է պարտավորեցնի արոտավայրերը տալ վարձակալության, այլ պետք է պարտավորեցնի յուրաքանչյուր անասնագլխի համար արոտի վարձավճար գանձել 1 հա-ի հաշվարկով:

Աղյուսակ 2: Գավառ համայնքի գյուղնշանակության հողերի քանակը եւ վարձակալված հողերի քանակը

N	Հողատեսքեր	Համայնքային սեփականություն, հա	Պետական սեփակ. հա	Տրամադրվել է վարձակալության	Տարեկան վարձավճարի չափը
1.	վարելահող	5100		919,3 հա	4644,1 հազար դրամ

2.	խոտհարք	3308,5	20,0	133,5	511,4 հազար դրամ
3.	արոտավայր	6617	5935,79	788,4 հա	1360,6 հազար դրամ
4.	Այլ հողեր	1556,55	462,0		
	ընդամենը	11369,99	6417,79		6.516.1

<u>Հարկերի հավաքագրման քաղաքականությունը</u>

Համայնքի ավագանին կայացրել է որոշումներ, որոնցով գույքահարկի եւ հողի հարկի արտոնություններ է սահմանել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար:

- **01.06.2013թ.-ի թիվ 31-Ա որոշում**. «Գարուն-11» ԼՏԸ-ն վճարել է գույքահարկի մայր գումարները, համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 3-րդ կետի, «Հողի հարկի մասին» 10-րդ հոդվածի «Ժ» ենթակետի եւ ՏԻՄ մասին օրենքի 16 հոդվածի 2-րդ մասի, Գավառ համայնքի ավագանին որոշում է. **«Համաձայնություն տալ սահմանելու գույքահարկի գծով արտոնություն «Գարուն-11» ԼՏԸ-ին՝ զիջելով 140555 ՀՀ դրամ գույքահարկի գծով տույժը:**
- **06.05.2013թ. թիվ 20-Ն որոշում.** նկատի ունենալով, որ ներքոհիշյալ քաղաքացիները վճարել են իրենց շենքերի եւ շինությունների գույքահարկերի մայր գումարները, համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 3-րդ կետի, «Հողի հարկի մասին» 10-րդ հոդվածի «Ժ» ենթակետի եւ ՏԻՄ մասին օրենքի 16 հոդվածի 2-րդ մասի, Գավառ համայնքի ավագանին որոշում է. **«Համաձայնություն տալ կից ցուցակով սահմանված անձանց նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝ թվով 50 հոգի, գույքահարկի եւ հողի հարկի գծով»:**
- **09 հոկտեմբերի 2013թ. թիվ 59 որոշում.** նկատի ունենալով, որ ներքոհիշյալ քաղաքացիները վճարել են իրենց շենքերի եւ շինությունների գույքահարկերի մայր գումարները, համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 3-րդ կետի, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի ժ/ ենթակետի եւ ՏԻՄ օրենքի16 հոդվածի 2-րդ մասի, Գավառ համայնքի ավագանին որոշում է. **«Համաձայնություն տալ կից ցուցակով սահմանված անձանց նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝**64 անձի՝ հողի հարկի գծով եւ 18 անձի՝ գույքահարկի գծով»**:**

§Գույքահարկի մասին՝ ՀՀ օրենքի 15 հոդվածի 3-րդ կետ.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ:
Համայնքի ավագանու կողմից գույքահարկի գծով սահմանված արտոնությունների գումարի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:

«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդված. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասից կամովին հրաժարվելու դեպքում համայնքային կամ պետական սեփականություն ճանաչված հողամասերի սեփականատեր հանդիսացած ֆիզիկական անձինք ազատվում են նաեւ այդ հողամասերի համար 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված եւ չվճարված հողի հարկի, ինչպես նաեւ այդ գումարները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված եւ չվճարված տույժերի գումարների վճարումից: Հողամասից կամովին հրաժարված ֆիզիկական անձանց հարկային արտոնությունների տրամադրման հետեւանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ»:

Հարկ է նշել, որ Գավառ քաղաքային համայնքի ավագանին քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց տույժերը զիջել է առանց նրանց սոցիալական վիճակը՝ անվճարունակությունը, գնահատելու: Պատճառն այն է, որ հարկային արտոնությունները՝ տույժերից ազատելը տեղական իշխանությունը կիրառում է որպես հարկերը վճարելու խրախուսանքի ձեւ, որպեսզի վճարեն ապառքները:

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի բյուջեի սեփական մուտքերի գծով ապառքները (առ 2013թ. հունվարի 1-ը եւ հուլիսի 1-ը դրությամբ ըստ «Քաունթերփարթ ինթերնեշնլի» հետազոտության արդյունքների)

Աղյուսակ 3

Հ/հ	Եկամտատեսակները	Ընդամենը ապառքըառ 2013թ. հունվ. 1-ը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	Այդթվում՝ տույժեր, տուգանքներ	Ընդամենը ապառքըառ 2013թ. հուլ. 1-ը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	Այդթվում՝ տույժեր, տուգանքներ
	Ընդամենը ապառքներ, այդ թվում	**266,003.6**	**100.0**	**56,734.2**	**245,969.2**	**100.0**	**61,826.2**
1	**Հարկեր եւ տուրքեր, այդ թվում**	**262,107.6**	**98.5**	**56,734.2**	**243,691.2**	**99.1**	**61,826.2**
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում	181,892.8	68.4	45,472.5	178,788.2	72.7	49,396.9
	Գույքահարկ շենքերի եւ շինությունների համար	83,035.6	31.2	20,642.9	81,380.1	33.1	22,574.5
	Հողի հարկ	98,857.2	37.2	24,829.6	97,408.1	39.6	26,822.4
1.2	Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում	79,774.8	30.0	11,261.7	64,823.0	26.4	12,429.3
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	79,774.8	30.0	11,261.7	64,823.0	26.4	12,429.3
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործուն.-ան իրականաց. թույլտվության վճարներ, այդ թվում	440.0	0.2	0.0	80.0	0.0	0.0

	Տեղական տուրքեր	440.0	0.2	0.0	80.0	0.0	0.0
1.4	Ապրանքների մատակարարումից եւ ծառայ.-երի մատուց.-ից այլ պարտադիր վճարներ, այդ թվում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Պետական տուրքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.5	Այլ հարկային եկամուտներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	**Այլ եկամուտներ, այդ թվում**	**3,896.0**	**1.5**	**0.0**	**2,278.0**	**0.9**	**0.0**
3.3	Գույքիվարձակալությունից եկամուտներ, այդ թվում	3,896.0	1.5	0.0	2,278.0	0.9	0.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	3,896.0	1.5	0.0	2,278.0	0.9	0.0

ԱՄՓՈՓՈՒՄ

Գավառ քաղաքի վերջին տարիների հարկերի հավաքագրման ցուցանիշները ցույց են տալիս, որ քաղաքապետարանը 85-100% հավաքագրում է ապահովել, չնայած առանձին եկամտատեսակների մասով հավաքագրումների ցուցանիշներն անբավարար են եղել: Եզրակացությունն այն է, որ քաղաքապետարանի աշխատակազմը հետեւողական եւ մշակված միջոցառումներով աշխատանք չի իրականացրել ընթացիկ տարվա հարկերը հավաքագրելու հարցում (օրինակ, համայնքը 2012թ.-ին հողի հարկի պլանը կատարել է 57,8%-ով) եւ տարեկան պլանն ապահովել է նախորդ տարիներից մնացած ապառքների որոշակի տոկոս հավաքագրելով: Այդ է պատճառը, որ համայնքը 2013թ. հուլիսի 1-ի դրությամբ 245 մլն 969.2 հազար դրամ ապառք ունի եւ այն հավաքագրելու ուղղությամբ առանձնապես ջանքեր չի գործադրել:

Աշխատակազմը ոչ միայն բավարար ջանքեր չի գործադրել հողի հարկն ու վարձավճարները գանձելու հարցում, այլեւ լրջորեն չի զբաղվել եւ հստակ քաղաքականություն չի մշակել համայնքային բյուջեն սեփական եկմուտների հաշվին համալրելու ուղղությամբ: Համայնքի ունեցած ամենաեկամտաբեր ռեսուրսը հողերն են, որոնց չափազանց փոքր տոկոսն է տրված վարձակալության: Այն դեպքում, երբ համայնքում լուծված է կաթի իրացման խնդիրը, որի արդյունքում զգալիորեն ավելացել է անասնագլխաքանակը, սակայն դրանց թվի հարաբերակցությամբ վարձակալված արոտների քանակը չափազանց փոքր է: Համայնքային բյուջեն համալրելու ոչ բոլոր ռեսուրսներն են օգտագործվում, ինչպես օրինակ, նախրապանից վարձավճար գանձելը, այն դեպքում՝ երբ համայնքում առկա անասունների հիմնական մասը նախրապանին է հանձնվում արոտ տանելու համար:

Քաղաքապետարանը լիարժեք չի օգտագործում հրապարակայնությունն ապահովվելու հնարավորությունները՝ հանրությանը մշտապես ներկայացնելու վարձակալության ենթակա հողատեսքերը եւ դրանց օգտագործման երկուստեք շահութաբերությունը:

Տեղեկատվությունը չափազանց սահմանափակ է, քանի որ համայնքային երկու կայքերից՝ www.gavariqaghaqapetaran.am, www.kyavar.com, ոչ մեկը չի կիրառվում իր նպատակային նշանակությամբ եւ հանրությանը չի ներկայացվում որպես համայնքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու առաջնային միջոց: Կայքում հայտարարություններ չեն տեղադրվում մրցույթների ու աճուրդների մասին, հարկերի հավաքագրմանն ուղղված ուղերձներ կամ բնակչությանն ուղղված կոչեր չեն հրապարակվում, համայնքային իշխանության գործունեությունը չի հրապարակայնացվում, տարեկան գործունեության մասին ամփոփ հաշվետվություններ չեն ներկայացվում: Այդ նպատակին չեն ծառայեցվում նաեւ տեղեկատվական ցուցատախտակները, որոնք ՏԻՄ եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետք է տեղադրվեն համայնքի մարդաշատ վայրերում՝ համայնքային իշխանության կայացրած որոշումների եւ համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին բնակչությանը տեղեկացնելու համար: Երբեմն նման հայտարարություններ տարածվում են «Քյավառ» հեռուստատեսությունով, իսկ “Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը, որտեղ տպագրվում են աճուրդների եւ մրցույթների մասին հայտարարությունները, իր սահմանափակ տպաքանակի պատճառով հասանելի չէ հանրությանը:

«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հետ համատեղ նախորդ տարում հարկերի հավաքագրման նպատակով իրականացրած ծրագրի արդյունքները, ինչպես աշխատակազմում են վկայում, գոհացուցիչ էին, ուրեմն կարող էին այդ միջացառումները կրկնել տարեկան մի քանի անգամ՝ հարկահավաքության ցուցանիշները բարձրացնելու համար: Սակայն հարկերի հավաքագրման 2013 թ· ընթացիկ ցուցանիշները խոսում են այն մասին, որ քաղաքապետարանը հետեւողական չի գտնվել այս հարցում:

Քաղաքապետարանը չի կիրառում ՏԻՄ օրենքի 34 հոդվածի 2-րդ մասով (***տեղական հարկերը, տուրքերը եւ վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ***) իր վրա դրված պարտավորությունները եւ անպարտաճանաչ հարկատուներից հարկերը գանձելու միջոցներ չի ձեռնարկում:

Թերհավաքագրման պատճառներից մեկը համարվում է բնակչության աղքատությունը, սակայն ավագանին չունի որեւէ որոշում, որով բնակիչներից որեւէ մեկը, սոցիալական վիճակով պայմանավորված, ազատվել է հարկային պարտավորություններից:

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնք

Տեղական բյուջեի աճին վերաբերող իրավիճակը

Սեւանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերջին 5 տարիներին Սեւան համայնքի սեփական եկամուտների միջին մակարդակը կազմել է 100 մլն դրամ, ամբողջությամբ հավաքագրելու դեպքում այն կկազմեր 127 մլն դրամ:

2013թ. նոյեմբերի 1-ին դրությամբ Սեւան համայնքի բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 65,3%-ով: Նախորդ՝ 2012թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ (2012թ.-ին սեփական բյուջեն կատարվել է 77,1%-ով) սեփական եկամուտներն ավելացել են 25,5%-ով կամ սեփական եկամուտների հավաքագրումն ավելացել է 9,2 մլն դրամով:

Բյուջեի եկամուտների աճը քաղաքապետարանը բացատրում է հետեւյալ կերպ. համայնքի ղեկավարի աշխատակազմն ակտիվացրել է հարկերի հավաքագրումը, իրականացվել են աճուրդներ, օրինականացվել են ինքնակամ շինություններ:

2013թ.-ի ընթացքում քաղաքապետարանը 10-ը աճուրդ է իրականացրել, օտարվել է՝ 1632 քմ բնակելի կառուցապատման եւ 2387 քմ հասարակական կառուցապատման հողամաս:

Աճուրդի ներկայացված լոտերի շուկայական գնահատում չի կատարվել, որը պատճառաբանվեց նրանով, որ օրենքը թույլ է տալիս որպես բարձր լեռնային գոտի՝ կադաստրային արժեքի 50%-ով օտարել հողերը: Աճուրդի ներկայացված հողերի քմ-ի մեկնարկային արժեքը կազմել է 621 դրամ, իսկ վաճառքի առավելագույն արժեքը եղել է 1982 դրամ: Աճուրդներն իրականացվել են երկու հայտերով:

Սեւան համայնքը օտարելու համար միայն բնակելի կառուցապատման եւ հասարակական կառուցապատման հողամասեր ունի, որի պահանջարկը նրանց ասելով՝ չկա, քանի որ ժողովուրդը գնողունակ չէ:

Բյուջեի մուտքերն ավելացել են նաեւ ինքնակամ շինություններն օրինականացնելու վարձավճարներից:

Սեփական եկամուտների թերակատարման հիմնական պատճառներից մեկը «Սեւան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից համայնքի բյուջեին հասանելիք հողի վարձավճարների գծով թերակատարումն է շուրջ 13 մլն դրամի չափով:

Համայնքային բյուջեն սեփական եկամուտների հաշվին մեծացնելու հնարավորությունները.

ՀՀ կառավարության 21.06.2005թ. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու եւ Սեւան քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հաղամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1766-Ն եւ նշված որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 15.12.2005թ. թիվ 2312-Ն որոշումներով փոխվել է Սեւան քաղաքի վարչական սահմանների նկարագիրը. 2675 հա-ից կրճատվել է 899 հա-ը եւ քաղաքի վարչական տարածքի ընդհանուր մակերեսը կազմել է ընդամենը 1776 հա, որից էլ 458,27 հա-ը ռեկրեացիոն գոտին (թերակզուց մինչեւ Լճաշենի վարչական սահման) անհատույց մշտական օգտագործման է տրամադրվել «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:

Սեւան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերը ՀՀ կառավարության՝ 10.12.2009թ. թիվ 1438-Ն որոշմամբ տրվել են «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին եւ համապատասխան պայմանագրերով նախատեսված հողօգտագործման համար վճարները փոխանցվել են ««Սեւան» ազգային պարկին»: Համաձայն նույն որոշման՝ «Սեւան» ազգային պարկ»-ի գանձած վճարների առնվազն 30%-ը պետք է փոխանցվի համայնքային բյուջե՝ համայնքի եւ ՊՈԱԿ-ի միջեւ կնքված պայմանագրին համապատասխան: **Ներկայումս այդ հողերը 458,27 հա են, որից՝ 90 հա-ն ընդգրկում է ճանապարհներ, եկեղեցու տարածքը եւ կառավարական ամառանոցը: Մոտավորապես 80 հա-ի վերաբերյալ «**«Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի եւ Սեւան համայնքի միջեւ պայմանագիր չի կնքվել: ««Սեւան» ազգային պարկ»-ը հողի վարձակալական պարտավորություններ ունի միայն 280 հա-ի համար, որը 2011թվականից մինչ օրս կատարել է թերացումներով, անկանոն եւ ոչ ամբողջական:

Քաղաքի վարչական տարածքի կրճատումը հանգեցրել է նրան, որ քաղաքի հետագա զարգացումը դարձել է անհեռանկարային եւ քաղաքը զրկվել է հողի հարկի ու գույքահարկի շուրջ 40 մլն դրամ սեփական եկամուտներից: Դրանով իսկ սահմանափակվել են քաղաքի բյուջեի սեփական եկամուտներն ավելացնելու եւ քաղաքի հետագա զարգացման հնարավորությունները: Այսպիսով՝Սեւան քաղաքը վերջին 40 տարում զրկվել է 5785 հա տարածքից, որից 1158 հա-ը՝ ափամերձ գոտի: Նման վիճակը հանգեցրել է քաղաքի զարգացման անորոշ հեռանկարի եւ սեփական ռեսուրսների կտրուկ նվազման, որի արդյունքում ներկայումս համայնքի սեփական եկամուտները կազմում են ընդամենը 127 մլն դրամ (100%-ով կատարելու դեպքում), որը ամբողջությամբ ուղղվում է կենսապահովման առաջնահերթ խնդիրների նվազագույն պահանջների բավարարմանը: Առաջնահերթ եւ անհրաժեշտ ծախսերը կազմում են 143 մլն դրամ: Ակնհայտ է, որ համայնքի 2013թ.-ի բյուջեի սեփական եկամուտները 100%-ով կատարելու դեպքում անգամ ազատ միջոցներ չեն մնում նույնիսկ ընթացիկ փոսային նորոգումներ կատարելու համար:

ՏԻՄ օրենքի 57-րդ հոդվածի եւ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 28,1 հոդվածի՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերի վարձավճարն ամբողջությամբ համարվում է համայնքի բյուջեի սեփական եկամուտների ձեւավորման հիմնական աղբյուրներից մեկը եւ ամբողջությամբ պետք է

գանձվի համայնքի բյուջե: Մինչդեռ, ՀՀ կառավարությունը 10.12.2009թ.-ի թիվ 1438-Ն որոշմամբ սահմանվել է, որ «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրինմանը հանձնված ՀՀ Գեղարքունքիի մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի վարձակալության վարձավճարների տարեկան գումարների 30%-ն է փոխանցվում համապատասխան համայնքին (2013թ.-ի հուլիսից արդեն 25%-ը):

1966թ.-ին Սեւան քաղաքին են միացվել Ցամաքաբերդ եւ Գոմաձոր գյուղերը, իսկ նրանց գյուղնշանակության բոլոր հողատեսքերը՝ համապատասխանաբար 1067 եւ 1498 հեկտար, 1964թ.-ին հանձնվել էին Ծովագյուղի տնտեսությանը: Հարկահավաքման իրավասությունը 2004թ.-ից քաղաքապետարանին փոխանցվելուց հետո Սեւան համայնքի **Գոմաձոր եւ Ցամաքաբերդ** թաղամասերում հարկահավաքություն չի իրականացվել:
Նրանց գույքահարկի եւ հողի հարկի պարտքը տարեկան կազմում է մոտ 6-8 մլն դրամ: Մոտ 18 մլն դրամի չափով նրանք 2 տարի գույքահարկի վճարում չեն կատարել: Քաղաքապետարանի ունեցած տվյալներով՝ թաղամասի բնակիչների մոտ 60%-ը սեփականության իրավունքի վկայական չունի, գումար չունենալու պատճառով ժառանգության եւ այլ իրավունքների հետ կապված նոտարական վավերացումներ չեն կատարվել, կադաստրում գույք չեն գրանցել (նրանք միայն տնամերձ հողամասեր ունեն): Չվճարողների 20-25%-ը բացակայում է հանրապետությունից, 30%-ը մահացել է, իսկ իրավահաջորդները հեռացել են հանրապետությունից: Քաղաքապետարանն, ըստ էության հարկերը գանձում է կենսաթոշակառուներից՝ լավ իմանալով, որ 30 հազար դրամ ստացող կենսաթոշակառուն այդ կերպ չի կարող ապահովել նվազագույն սոցիալական զամբյուղը:

<u>Հարկերի հավաքագրման քաղաքականությունը</u>

2013թ.-ին Սեւան քաղաքի ավագանին ընդունել է որոշումներ, որոնք նպատակաուղղված են համայնքի սեփական եկամուտների ավելացմանը եւ համայնքում հարկահավաքման բարելավմանը:

- Սեւան համայնքի **ավագանին 03 ապրիլի 2013 թվականի N 4-Ա որոշումով** ստեղծել է հանձնաժողով, որն ուսումնասիրել է Սեւանի ափամերձ տարածքը: Քաղաքապետն ուսումնասիրության հիման վրա դիմել է ՀՀ նախագահին՝ Սեւան քաղաքի գլխավոր հատակագիծը վերանայելու խնդրանքով: Դիմել է նաեւ փոխվարչապետին՝ երկու կառույցների միջեւ 30%-ի մասով գումարային պարտավորությունները հստակեցնելուն աջակցելու խնդրանքով:
- Սոցիալապես անվճարունակներին հարկային պարտավորությունից ազատելու համար Սեւան քաղաքային համայնքի ավագանին որոշում չի ընդունել:

Տարվա ընթացքում ավագանին նաեւ երկու որոշում է կայացրել համայնքի մի շարք քաղաքացիների գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու մասին:

- **Ավագանու 03.04.2013թ. թիվ 14-Ա որոշումով** 13 քաղաքացիների եւ 5 իրավաբանական անձանց զիջվել են շինությունների գույքահարկի տույժերը:
- **Ավագանու 09.08.2013թ. թիվ 39-Ա որոշումով** Սեւան համայնքի 37 բնակիչների զիջվել է մեքենաների գույքահարկի տույժերը (որոշումներին ծանոթացեք ստորեւ):

Ավագանու երկու որոշումներով թվով 55 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գույքահարկի տույժերը զիջելը, որը մոտ 2 մլն 102,017 դրամ գումար է կազմում, քաղաքապետարանի աշխատակազմում բացատրում են այսպես. դրանք կուտակվել են 2008թ.-ից հետո եւ եթե իրենց հորդորով հարկատուներն ամբողջությամբ կատարում են հարկային պարտավորությունները, դրա դիմաց զիջում են տույժերը, եթե չզիջեն՝ մայր գումարը չեն վճարի: Իրավաբանական ընկերություններին նույնպես զիջվել է շինությունների գույքահարկն ու հողի հարկը, որը պատճառաբանվում է այդ ձեռնարկությունների պարապուրդի մեջ գտնվելով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ապրիլի 2013 թվականի N 14-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ ՁԵԿ.՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հարակից զեկ.՝ ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ /

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ձիջել ներքոհիշյալ քաղաքացիներին պատկանող փոխադրամիջոցների և շենք-շինությունների գույքահարկի պարտքերը / հարկ և տույժ /՝

Փոխադրամիջոցներ	տույժ- զիջում
✓ Խաժակ Բաղալյան-ՀՎՀՀ 17371036- Ս.Նովա 11/16 - ՖՈԼԿՍՎԱԳԵՆ ՏՈՒԱՐԵԳՎ	- 14.084 դրամ
✓ Արամ Կիրակոսյան -ՀՎՀՀ 17317052 - 5-րդ մ/թ 8/3 - միցուբիշի GALANT	- 23.426 դրամ
✓ Քնքուշ Ավետիսյան -ՀՎՀՀ M0062696- Ս.Սևանեցի 24 / 17 - ՄԵՐՍԵԴԵՍ ԲԵՆՑC240	- 10.860 դրամ
✓ Անդրանիկ Սիրեկանյան - ՀՎՀՀ M0062022- Նաիրյան 168/1ա -NISSAN PATROL5.6	- 16.487 դրամ
✓ Հակոբ Հայրապետյան - ՀՎՀՀ M0062074 - Ձկնորսների 13/1 - AKURA	- 5.849 դրամ
✓ Արա Սահակյան - ՀՎՀՀ M0062221 - Ս. Նովա 20/8 - ՄԵՐՍԵԴԵՍ ԲԵՆՑ S500	- 22.523 դրամ
✓ Մերուժան Մկրտչյան - ՀՎՀՀ 17431109 - Ս.Սևանեցի 19/7 - ՕՊԵԼ SINTRA 3.	- 7.263 դրամ

Շինություններ	
✓ Աղասի Թութինջյան - ՀՎՀՀ M0062369 - Նաիրյան 160	- 58.792 դրամ
✓ Գագիկ Նիկողոսյան - ՀՎՀՀ 17340405 - Կ.Բանակի հարև.54	- 18.044 դրամ
✓ Բորիս Մկրտչյան - ՀՎՀՀ M0061789 - Կ.Բանակի	- 3.886 դրամ
✓ Մեսրոպ Կնյազյան - ՀՎՀՀ M0062419 - Նաիրյան 141 / 1-6	- 5.951 դրամ
✓ Գրայիկ Ղուկասյան - ՀՎՀՀ M0062657 - Խաղաղության փող. վերջ.	- 15.281 դրամ
✓ Ալեքսան Պողոսյան - ՀՎՀՀ 17448074 - Նալբանդյան 33	- 41.731 դրամ
✓ «ՄԱՐՍ» ԱԿ - ՀՎՀՀ 08600112 - Սևան համայնք	- 13.610 դրամ

տույժ- զիջում

✓ «ԱԼԵՀԵՐ ՄԱՍԻՍ» ՍՊԸ - ՀՎՀՀ 08610054 - Սևան համայնք - 31.561 դրամ

✓ «ՀԻԴՐՈՇԻՆԱՐԱՐ-5» ՓԲԸ - ՀՎՀՀ 08603489 - Սևան համայնք - 9.498 դրամ

✓ «Երևանի առագաստանավային ակումբ» ՍՊԸ - ՀՎՀՀ 02584049 - Սևան համայնք - 377.297 դրամ

✓ Սևանի «Պանրի գործարան» ԲԲԸ - ՀՎՀՀ 08603393 - Սևան համայնք - 198.541 դրամ

2. Որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

	Կողմ	դեմ	ձեռնպահ
1. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ			
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ			
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
5. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ			
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
7. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ			
8. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ			
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2013 թվականի N 39-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ՁԵԿ.՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետ պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Չիջել ներքոհիշյալ քաղաքացիներին պատկանող փոխադրամիջոցների և շեն շինությունների գույքահարկի պարտքերը / հարկ և տույժ /՝

Փոխադրամջոցներ

						տույժ - գին դրամ
✓	Խաչիկ Գրիգորյան	- ՀՎՀՀ M0060847	- Ս. Սևանեցի 23 / 35	- ՖՈՐԴ		- 518 դրամ
✓	Մերուժան Գասպարյան	- ՀՎՀՀ M0062303	- Նալբանդյան 4	-TOYOTA_SEQOIA		- 10248 դրամ
✓	Վահագն Հակոբյան	- ՀՎՀՀ M0060788	- Գրիբոյեդով 1 / 23	- ՎԱԶ-21214		- 5456 դրամ
✓	Զավեն Հարությունյան	- ՀՎՀՀ 17360118	- Նաիրյան 129 / 7	- Մերսեդես-Բենց S280		- 47160 դրամ
✓	Աշոտ Բաղալյան	- ՀՎՀՀ M0061450	- Գործարանային 2 / 17	- ՕՊԵԼ ՕՄԵԳԱ 3.01		- 120912 դրամ
✓	Ֆենյա Գրիգորյան	- ՀՎՀՀ 17365077	- Գագարին, Գայի 1 / 47	- ՎԱԶ-2103		- 19151 դրամ
✓	Լյուդվիգ Խաչատրյան	- ՀՎՀՀ M0063035	- Գայի 1 / 19	- ԲՄՎ 525		- 792[illegible] դրամ
✓	Արթուր Խաչատրյան	- ՀՎՀՀ M0060698	- Գայի 1 / 19	- ԲՄՎ 530I		- 80[illegible] դրամ
✓	Լարիսա Խաչատրյան	- ՀՎՀՀ M0060689	- Գայի 1 / 32	- VW JETTA		- 25702 դրամ
✓	Արմեն Խաչատրյան	- ՀՎՀՀ M0063020	- Գայի 1 / 32	- AUDI Q7 3.6		- 42100 դրամ
✓	Նարեկ Մովսիսյան	- ՀՎՀՀ M0061546	- Շահումյան 49	- ՏՈՅՈՏԱ RAV4 2.0		- 8201 դրամ
✓	Մարատ Սարիբեկյան	- ՀՎՀՀ 17481936	- Ս. Սևանեցի 16 / 12	- ԳԱԶ24-02		- 14023 դրամ
✓	Արմիկ Սարգսյան	- ՀՎՀՀ M0063027	- Իսահակյան 12	- INFINITI FX50		- 14932 դրամ
✓	Արայիկ Գևորգյան	- ՀՎՀՀ M0063044	- Նաիրյան 197 / 13	- MERCEDES VBENZ S 320		- 70133 դրամ
✓	Կարեն Ղազարյան	- ՀՎՀՀ M0060506	- Գրիբոյեդով 10 / 21	- S500L		- 100960 դրամ
						09.07.2013թ. դրությամբ
✓	Հրաչիկ Թովմասյան	- ՀՎՀՀ 17337255	- Էներգետիկների 3 / 29	- ՎԱԶ 21033		- 10081 դրամ
✓	Խաչիկ Պողոսյան	- ՀՎՀՀ 17469511	- Գայի / 27	- MERCEDES VBENZ 280SE		- 5158 դրամ
✓	Գոռ Գրիգորյան	- ՀՎՀՀ M0060414	- Գրիբոյեդով 8 / 15	- ԳԱԶ 2705-414		- 2837 դրամ
✓	Գրիգորի Պապոյան	- ՀՎՀՀ M0060323	- Զարենց 118	- Մերսեդես-Բենց ML320		- 38507 դրամ
✓	Գեղամ Նավասարդյան	- ՀՎՀՀ M0063014	- Նաիրյան 141 / 1	- Մերսեդես-Բենց E320		- 7993 դրամ

✓ Կորյուն Աբրահամյան - ՀՎՀՀ M0062078 - Նաիրյան 32/19 - Նիսսան Ամոռդա 5.6 - 53150 դրամ

✓ Արտյոմ Իսպիրյան - ՀՎՀՀ M0063046 - Նալբանդյան 25/24- CRUISER PRADO 2.7 - 6979 դրամ

Շինություններ

				տույժ - գիջում
✓ «Տուֆ-Գրանիտ» ՍՊԸ	- ՀՎՀՀ 08410417	- Սևան համայնք	-	44007 դրամ
✓ «ՍԵՎԱՆ 2000» ՍՊԸ	- ՀՎՀՀ 08608921	- Սևան համայնք	-	8354 դրամ
✓ «Էդգար և Խորեն» ՍՊԸ	- ՀՎՀՀ 08600232	- Սևան համայնք	-	181500 դրամ
✓ Ռազմիկ Բաղդասարյան	- ՀՎՀՀ 17310354	- Ազատության 18ա	-	8861 դրամ
✓ Սաշիկ Պողոսյան	- ՀՎՀՀ M0061564	- Ձկնորսների 9	-	9844 դրամ
✓ Հրանտ Հարությունյան	- Ազատամարտիկ	- Աբովյան	-	16921 դրամ
✓ Լևոն Հակոբյան	- ՀՎՀՀ M0060235	- Ս. Սևանեցի 17	-	3814 դրամ
✓ Նարինե Գրիգորյան	- ՀՎՀՀ M0061910	- 5-րդ մ/թ N2 մանկապ.	-	56452 դրամ
✓ Գերասիմ Բաղդասարյան	- ՀՎՀՀ 17316739	- Չարենցի 36	-	13782 դրամ
✓ Հրաչիկ Գևորգյան	- ՀՎՀՀ 17437939	- Չարենցի 42ա	-	11623 դրամ
✓ Վալերիկ Մարգարյան	- ՀՎՀՀ 17425294	- Ելենովկա 7	-	8024 դրամ
✓ Մկրտիչ Ասատրյան	- ՀՎՀՀ 17304525	- Կոմիսարների 2	-	11449 դրամ
✓ Ցատուն Նուբարյան	- ՀՎՀՀ M006392	- Խաղաղության	-	25416 դրամ
✓ Սաշա Քարամյան	- ՀՎՀՀ 17441797	- Խորհուրդների 48	-	7084 դրամ

2. Որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

	Կողմ	դեմ	ձեռնպահ
1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ			
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ			
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ			
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ			
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ			
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ			
8. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ			
9. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ			
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ			
11. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ			
12. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ			
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ			

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարկերի հավաքագրմանն ուղղված աշխատանքները.

Տեղական բյուջեի աճին նպաստելու համար Սեւանի համայնքապետարանն իրականացրել է հետեւյալ գործողությունները.

- 250-ից ավելի անհատական ծանուցումներ են առաքվել հարկատուներին՝ յուրաքանչյուրին մոտ 3 անգամ, որից հետո անպարտաճանաչ հարկատուներից հարկերը գանձելու համար դիմել են դատարան:
- 2013թ.-ին քաղաքապետարանը 90 հայց է ներկայացրել դատարան (դատական կարգով հարկերը բռնագանձելու մեթոդը քաղաքապետարանն առաջին անգամ է կիրառում): Հայցադիմումները ներկայացվել են հիմնականում մեծ գումարների պարտքերի համար (գույքահարկի ամենամեծ պարտքը 2,218,000 դրամ է, որ կուտակվել է վերջին 5 տարիներին): Քաղաքապետարանի հայցերը բոլորը բավարարվել են, որից հետո հարկատուների 30-40%-ը վճարել է մայր գումարը, իսկ մյուսների վերաբերյալ կատարողական թերթեր են ուղարկվել ԴԱՀԿ: Մոտ 10 մլն գումար պետք է մարվի դեռեւս, որից 8 մլն դրամը գույքահարկ, 2 մլն՝ հողի հարկ:
- «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի դեմ դատական հայցեր չեն ներկայացվել, քանի որ ՊՈԱԿ-ի եւ Սեւանի քաղաքապետարանի միջեւ համապատասխան պայմանագիր չկա, որի պատճառով էլ 2 կառույցների միջեւ 30%-ի մասով գումարային պարտավորությունները հստակեցված չեն: Քաղաքապետարանի նկատմամբ ՊՈԱԿ-ի պարտքը կազմում է 21 մլն դրամ, ՊՈԱԿ-ի ներկայացրած տվյալներով՝ այն 12 մլն դրամ է, քաղաքապետարանն էլ չունենալով համապատասխան հիմքեր՝ չի կարող հայց ներկայացնել դատարան գումարները գանձելու համար:

Հարկային պարտավորությունները կատարելու եւ այլ տեղեկատվության մասին բնակչությանն իրազեկում են քաղաքապետարանի «Սեւան» ամսաթերթի եւ տեղական STV1 հեռուստատեսության միջոցով: Համայնքի պաշտոնական կայքը՝ http://sevan.region.am եւ ցուցատախտակներն այդ նպատակին չեն ծառայեցվում: Աճուրդների եւ մրցույթների մասին հայտարարությունները նույնպես տեղ չեն գտնում դրանցում, դրանք հրապարակվում են միայն «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: Քաղաքապետարանում այն կարծիքին են, որ Հողային օրենսգիրքն է այդպես պարտավորեցնում:

Աղյուսակ 4: Սեւան համայնքի հողերի բաշխվածությունն ըստ նշանակության

	Հողերն ըստ նշանակության	Համայնքում առկա	պետական	իրավաբանական եւ ֆիզիկական անձանց սեփականություն

1.	Համայնքի վարչական տարածքը,	863.44	651.56	
2.	գյուղատնտեսական նշանակության	107.54	-	
3.	պահուստային հողեր	-	-	
4.	բնակելի կառուցապատման	541.64	32.44	
5.	արդյունաբերական, արտադրական շինությունների	168.42	3.28	
6.	ընդերքօգտագործման	-	-	
7.	ճանապարհային հողեր	-	-	
8.	առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության	25.60	71.71	
9.	անտառային	-	45.52	
10.	ջրային ֆոնդի	1.40	61.73	
11.	հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ	24.0	482.19	
12.	Այլ բնակավայր (նշել)	330.82	-	
13	Ոչ գյուղնշանակության			2567 ֆ ի զ ի կ ական , 43 իրավաբան.

Աղյուսակ 5: Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի բաշխվածությունն ըստ հետեւյալ հողատեսքերի (հա).

Վարելահող	11,31
Պտղատու այգի	0
Խաղողի այգի	0
Խոտհարք	0
տնային տնտեսություն գյուղատնտեսական նշանակության հողերի քանակը	2860

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2009 թվականի N 1438-Ն

«ՄԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 47-րդ հոդվածի, «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն որոշման 3-րդ կետի «գ» ենթակետի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***:

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների կողմից Հայաստանի Հանրապետության անունից «Սեւան» ազգային պարկի տարածքի պետական սեփականություն հանդիսացող եւ «Սեւան» ազգային պարկ» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով հատկացված հողամասերի վարձակալության, անհատույց օգտագործման կամ կառուցապատման իրավունքի մասին կնքված պայմանագրերով նախատեսված Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորություններն անցնում են «Սեւան» ազգային պարկ» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը, իսկ այդ պայմանագրերով նախատեսված հողօգտագործման համար նախատեսված վճարները պետք է փոխանցվեն «Սեւան» ազգային պարկ» պետական ոչ առեւտրային կազմակերպության հաշվին.

2) «Սեւան» ազգային պարկի տարածքի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման համար «Սեւան» ազգային պարկ» պետական ոչ առեւտրային կազմակերպության կողմից գանձված վճարների ավելացված արժեքի հարկ վճարելուց հետո մնացած մասի առնվազն 30 տոկոսը պետք է փոխանցվի այն համայնքի բյուջե, որի վարչական սահմաններում գտնվում է տվյալ հողամասը՝ «Սեւան» ազգային պարկ» պետական ոչ առեւտրային կազմակերպության եւ համապատասխան համայնքի ղեկավարի միջեւ կնքված պայմանագրերին համապատասխան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սեւանի քաղաքապետարանը վերջին մեկ տարում՝ նոր քաղաքապետի ընտրվելուց հետո բավականին հետեւողական աշխատանք է իրականացրել համայնքային բյուջեն կատարելու եւ բյուջեի մուտքերը սեփական եկամուտների հաշվին մեծացնելու ուղղությամբ: Սակայն այն դեռեւս լիարժեք չէ, քանի որ հարկերի հավաքագրման, ինչպես նաեւ հարկային արտոնություններ տրամադրելու համար հստակ մեխանիզմներ եւ չափորոշիչներ չեն մշակվել:

Հարկահավաքումն ակտիվացնելու ընթացքում աշխատակազմը բախվել է մի շարք խնդիրների, որոնք անհրաժեշտ է լուծել իրավասու կառույցների աջակցությամբ, սակայն այդ ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքներ չեն իրականացվել: Ինչպես օրինակ, փոխադրամիջոցների գույքահարկի բազան ճշգրտելը (Սեւան համայնքում 6741 տրանսպորտային միջոց է գրանցված, շատ են հին համարանիշերով մեքենաները, կամ՝ մեքենաները չկան արդեն, բայց գույքահարկի բազայում տվյալները պահպանվում են):

Հողերի վարձակալության մասին պայմանագրերը, նրանց խոսքով, սխալ է կազմվել, համաձայն պայմանագրերի՝ տույժերը շարունակական աճում են, դրանք ներկայումս մայր գումարից ավել են կազմում, որն էլ ավելի է դժվարացնում հարկերի գանձումը:

Բավարար աշխատանք չի տարվում համայնքի բնակիչների հետ առավել թափանցիկ աշխատելու ուղղությամբ: Հարկերի վճարումը դյուրացնելու մեխանիզմներ չեն մշակվել, ինչը հնարավորություն կտար քաղաքացիներին տեղեկանալ իրենց ամսական վճարումների մասին եւ բանկային փոխանցումներ կատարել: Սա կարեւոր է

հատկապես այն առումով, որ համայնքից արտագաղթը բավականին մեծ թիվ է կազմում, իսկ այդ հանգամանքը հարկերը գանձելու գլխավոր խոչընդոտն է համարվում: Մարդիկ վարձակալել են հողը, իսկ հետո հեռացել են հանրապետությունից եւ դժվար է նրանց հայտնաբերելը, որպեսզի պարտավորեցնեն հարկերը վճարել: Բացի այդ, նույնիսկ տեղյակ չեն, որ հարկային պարտավորություններ ունեն (ինչպես նշվեց՝ մարդ կա եկեղեցի է կառուցել, բայց հողի հարկը չէր վճարել, գտանք, ասեցինք, որ պարտք ունի, եկան վճարեցին): Նշված փաստերը խոսում են այն մասին, որ հարկահավաքման քաղաքականությունը ճկուն չէ, քաղաքից հեռացածները պետք է բավարար իրազեկված լինեն իրենց հարկային պարտավորությունների, ինչպես նաեւ չվճարելու հետեւանքների մասին, հատկապես տուգանքներ եւ տույժեր կիրառելու մասով: Իրազեկելու պարտավորությունը համայնքային իշխանությանն է եւ միայն դրանից հետո իրավունք կունենան դատական կարգով բռնագանձում կատարելու կամ կամ տույժեր կիրառելու:

Քաղաքապետարանի պաշտոնական կայքը՝http://sevan.region.am-ը չի դիտարկվում համայնքի պաշտոնական տեղեկատվության աղբյուր եւ այն իր բոլոր հնարավորություններով չի ծառայեցվում որպես հարկերի հավաքագրման եւ իրազեկման միջոց:

ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔ

Տեղական բյուջեի աճին վերաբերող իրավիճակը

Վարդենիկ համայնքի տարեկան բյուջեն 156 մլն դրամ է, որից 25 մլն դրամը սեփական եկամուտներ, 131 մլն դրամը՝ դոտացիան: Համայնքի բյուջեն վերջին 5 տարիներին ավելացել է 10%-ով՝ մանրածախ առեւտրի կետերի թվի ավելացման եւ տեղական տուրքերի հաշվին: Բյուջետային մուտքերն ավելացել է նաեւ 2012թ.-ին 13 հա տնամերձ հողամասերի աճուրդ-վաճառքի արդյունքում՝ 1քմ-ը 22,220 դրամ արժեքով: Աճուրդն իրականացվել է կադաստրային արժեքի 100%-ով, որի դիմաց մուտքագրվել է 760 հազար դրամ:

Համայնքի ղեկավարի ասելով՝ 2013թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ արդեն 100%-ով հարկերը հավաքագրել են: Այդուհանդերձ, Վարդենիկը նունպես ապառքներ է կուտակել 2008թ.-ի օրենսդրական փոփոխությունից հետո, «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» օրենքի կիրարկմանը զուգահեռ, 2012թ. ընթացքում հողի հարկի գծով առաջացել են նոր ապառքներ, իսկ 2013թ. ընթացքում հողի հարկի գծով հավաքագրվել է առկա ապառքների աննշան մասը: Որոշ եկամտատեսակների գծով

առաջացած ապառքները դեռեւս մի քանի անգամ գերազանցում են նույն եկամտատեսակների գծով տարեկան փաստացի կատարողականներին:

Վարդենիկ գյուղական համայնքի ապառքների ծավալը 2013թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 70 մլն 531,7 դրամ:

Գույքահարկ՝ շենք-շինությունների գծով՝ 732,8 հազար դրամ,

Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 18 մլն 135,2 հազար դրամ,

Հողի հարկ- 51 մլն 663,7 հազար դրամ:

Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի բյուջեի սեփական մուտքերի գծով ապառքները (առ 2013թ. հունվարի 1-ը եւ հուլիսի 1-ի դրությամբ; ըստ «Քաունթերփարթ ինթերնեշնլի» հետազոտության արդյունքների)

Աղյուսակ 6

Հ/հ	Եկամտատեսակները	Ընդամենը ապառքը առ 2013թ. հունվ. 1-ը, հազ. դրամ	Տեսակ արար կշիռը, %	Այդթվում՝ տույժեր, տուգանքներ	Ընդամենը ապառքը առ 2013թ. հուլ. 1-ը, հազ. դրամ	Տեսակ արար կշիռը, %	Այդթվում՝ տույժեր, տուգանքներ
	Ընդամենը ապառքներ, այդ թվում	**71,116.9**	**100.0**	**17,398.5**	**70,531.7**	**100.0**	**19,681.3**
1	**Հարկեր եւ տուրքեր, այդ թվում**	**71,116.9**	**100.0**	**17,398.5**	**70,531.7**	**100.0**	**19,681.3**
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում	52,948.1	74.5	12,347.2	52,396.5	74.3	13,769.3
	Գույքահարկ շենքերի եւ շինությունների համար	713.0	1.0	224.2	732.8	1.0	251.1
	Հողի հարկ	52,235.1	73.5	12,123.0	51,663.7	73.3	13,518.2
1.2	Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում	18,168.8	25.5	5,051.3	18,135.2	25.7	5,912.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	18,168.8	25.5	5,051.3	18,135.2	25.7	5,912.0

Համայնքում կիրառվող հարկային վարչարարությունը

Վարդենիկի համայնքային իշխանությունը բնակչությանը մատուցած կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարներ չի գանձում: Համայնքի ղեկավարի ասելով՝ խմելու ջրի համար ավագանին 1000 դրամ է սահմանել ամսական վարձավճարը, սակայն, քանի որ գյուղի ոչ բոլոր թաղամասերը շուրջօրյա ջրամատակարարում ունեն,

ջրաչափեր տեղադրված չեն, գյուղի միայն կենտրոնական հատվածն է կոյուղացված, ուստի չնչին գումար է հավաքվում: «Հողի հարկը հազիվ ենք հավաքում, ուր մնաց թե ջրի վարձ վճարեն: Օպերատորը մի քիչ իր աշխատանքի դիմաց է գանձում, մի մասն էլ վերանորոգումների համար է ծախսվում», - ասում է համայնքի ղեկավարը:
Աղբահանումը նույնպես համայնքային բյուջեի միջոցներով է իրականացվում՝ շաբաթը 1-2 անգամ, աղբահանումն իրականացնող երկու աշխատողները նույնպես վճարվում են համայնքային բյուջեից:
Ավագանու որոշումով հարկային արտոնություններ են սահմանվել զոհված ազատամարտիկների ընտանիքների եւ այլոց համար:
Չնայած համայնքի ղեկավարի հավաստիացումներին, որ հանձնաժողովն է քննարկում սոցիալական օգնության դիմումները, սակայն ստորեւ բերված օրինակով պարզ է դառնում, որ ավագանին բնակչությանը հարկային արտոնությունները տրամադրել է առանց հանձնաժողովի կարծիքն ունենալու:



ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 39 ՈՐՈՇՈՒՄ

2 դեկտեմբերի 2013թ գ. Վարդենիկ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ Կառավարության 22.07.2012թ.-ի 822-Ն որոշման պահանջներով համայնքի ավագանին

որոշում է.

Ձիջել.

Ավետիք Հայրոյանին պատկանող ՎԱԶ 21063 մակնիշի 19OL588 պետհամարանիշի ավտոմեքենայի 28200 ՀՀ դրամ գույքահարկը:

Պերճ Դավթյանին պատկանող ՖՈԼԿՍՖԱԳԵՆ PASSAT 1.8 մակնիշի 13LS223 պետհամարանիշի ավտոմեքենայի 74813 ՀՀ դրամ գույքահարկը:

Դերենիկ Առաքելյանին պատկանող VAZ 2121 մակնիշի 21OL090 պետհամարանիշի ավտոմեքենայի 8925 ՀՀ դրամ գույքահարկը:



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31

գ. Վարդենիկ 21 հոկտեմբերի 2013թ

ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2013թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

Համայնքի 2013թ ֆոնդային բյուջեի եկամուտային մասում ավելացնել 760,0 հազար դրամ հողի օտարումից մուտքերը:
Ծախսային մասում վերը նշված գումարը հատկացնել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Ջրամատակարարում և կոյուղու համակարգերի շահագործում» նախահաշվի (բաժին 6, խումբ 3, դաս , ծրագիր 51) 5113 հոդվածին՝ կոյուղագծի կապ. վերանորգման նպատակով ծախսեր կատարելու համար:

Հարկերի հավաքագրմանն ուղղված աշխատանքները.

Հարկերի հավաքագրման ուղղված հստակ մշակված քաղաքականություն համայնքը չունի: Մեկ տարի առաջ հարկերի հավաքագրմանը նպատակաուղղված քարոզչական ծրագիր է իրականացվել «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համատեղ. «Վճարեք տեղական հարկերն ու տուրքերը՝ ունեցեք բարեկեցիկ համայնք» կարգախոսով թերթիկներում բնակիչներին շահագրգռել են վճարելու հարկերը, որպեսզի համայնքային իշխանությունը համայնքի բարեկեցությունն ապահովող աշխատանքներ իրականացնելու հնարավորություն ունենա: Ծրագրի իրականացումը հնարավորություն է տվել Ռուսաստանում գտնվող համայնքի որոշ բնակիչների հետ կապ հաստատել, որից հետո նրանք վճարում են հարկերը, սակայն ոչ բոլորի հետ է հաջողվել կապ հաստատվել: «Մարդկանց պետք է ցույց տալ, թե հավաքագրված գումարները որտեղ եւ ինչ նպատակով են ծախսվում: Նկատելի էր, որ որոշ թվով մարդիկ այդ դեպքում ավելի հեշտությամբ են հարկը վճարում» , - հայտնեց համայնքի ղեկավարը:
Ծրագրի ավարտից հետո հարկահավաքման քարոզչական եւ նպատակաուղղված աշխատանքները շարունակություն չեն ունեցել: ՏԻՄ օրենքով նախատեսված միջացառումներից համայնքի ղեկավարությունը կիրառում է՝

- ծանուցումների տրամադրում հարկատուներին՝ տարեկան մինչեւ 2 անգամ,
- մինչեւ 60,000 դրամ ապառքներ ունեցողների համար վճարման ժամանակացույց են կազմել,
- դատական հայցեր չեն ներկայացվել:

Համայնքային բյուջեն սեփական եկամուտների հաշվին մեծացնելու հնարավորությունները

Վարդենիկ համայնքը հողային մեծ ռեսուրսներ ունի, որի շատ փոքր մասն է օգտագործվում: Համայնքում գործում են 2 ֆերմերային տնտեսություններ, որոնք զբաղվում են կարտոֆիլի եւ հացահատիկի մշակությամբ: Նրանք վարձակալել են համայնքային գյուղնշանակության հողերից: Բնակիչներից ոմանք հողեր են վարձակալել նաեւ մասնավոր անձանցից, ովքեր չեն մշակում սեփականաշնորհված հողակտորները:

Համայնքի ղեկավարի ասելով՝ մշակովի հողերի քանակի ավելացման միտում է նկատվում համայնքում, որովհետեւ կարողացել են կազմակերպել արտադրանքի իրացումը: Կարտոֆիլի եւ կաղամբի իրացման հարցում դիմել են գյուղնախարարությանը՝ «Սպայկա» կազմակերպության միջոցով իրացման խնդիրը լուծելու: Դրան նպաստել է Կառավարության կողմից մատչելի գներով տրամադրվող դիզվառելիքն ու պարարտանյութը, որը բավականին օգնում է համայնքի բնակչությանը հողը մշակելիս: Համայնքի ղեկավարի ասելով՝ լինում է նաեւ, որ 1-2 տարի մշակելուց հետո հրաժարվում են հողից, եթե հաջողություն չեն ունեցել, լինում է նաեւ, որ ցանկանում են ավելացնել տարածքը:

	հողատեսքեր	Համայնքային սեփական; հա	Վարձակալության տրված հողեր; հա	Պետական սեփական; հա
1	վարելահող	398,67	204 հա	
2	խոտհարք	-		429,72.
3	արոտավայր	4763.53	100 հա	3449,99
4	այլ հողեր	443,92		61,7
	ընդամենը	5606,12		4491,41

Համայնքի ղեկավարը նշում է, որ վարձակալված խոտհարքները քիչ են. մոտ 5000 հա արոտ ունեն, որից

2012 թ.-ին 10 հա արոտ է տրվել վարձակալության 10643 դրամով,
2013թ.-ին՝ 100 հա արոտ է տրվել վարձակալության 64,500 դրամով:

Այն դեպքում, երբ համայնքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 5217 է, իսկ մանր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 1417:

Հողերի վարձակալության մրցույթների մասին հայտարարությունները փակցնում են համայնքապետարանում, հրապարակում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում եւ տարածում են տեղական հեռուստատեսություններով: Համայնքի ինտերնետ կայքը՝ http://vardenik.am, ինչպես նաեւ Համայնքային կառավարման

տեղեկատվական համակարգում http://87.241.168.230/Pages/Home/Default.aspx հասցեով գործող ինտրանետ կայքը տեղեկատվություն չեն պարունակում համայնքի մասին:

Վարդենիկ համայնքը 2013թ.-ին գրեթե բոլոր նշանակության հողերի աճուրդ-վաճառք է իրականացրել, որոնց օտարման արժեքները սակայն իրական մրցակցության մասին չեն խոսում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Համայնքային իշխանությունն ամեն տարի բյուջեում պլանավորում է ապառքների գանձման որոշակի տոկոս, որի հաշվին ապահովում է բյուջեի կատարումը, իսկ ընթացիկ պարտքերը շարունակվում են կուտակվել: Համայնքում տեղական ինքնակառավարում իրականացնող մարմինները՝ համայնքի ղեկավարն ու ավագանին, ոչ միայն նախանձախնդիր չեն գտնվել բյուջետային մուտքերն ավելացնելու հարցում, չնայած առկա հողային մեծ ռեսուրսներին, այլեւ ոչ ճիշտ վարչարարություն են որդեգրել հավաքված միջոցների ծախսումների հարցում: Այսպես· 2012թ.-ի տնամերձ հողամասերի աճուրդ-վաճառքից հավաքագրված գումարները՝ 760 հազար դրամ, նպատակաուղղել են ջրամտակարարման եւ կոյուղու համակարգի շահագործմանը, այն դեպքում, երբ այդ ոլորտի շահագործումը լիարժեք հնարավոր էր բնակիչներից գանձվելիք ամսական վարձավճարներով: Սակայն, վարձավճար չի սահմանվել եւ գանձում չի իրականացվել ոչ այս ոլորտի ծառայությունների եւ ոչ էլ աղբահանության համար:
Վարդենիկ համայնքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 5217 է, սակայն ավելի քան 4763 հա արոտավայրից 2013թ.-ին վարձակալության է տրվել ընդամենը 100 հա եւ այն էլ չափազանց խորհրդանշական արժեքով՝ 1 հա-ը 645 դրամով:
Յուրաքանչյուր գլխաքանակի համար 1 հա արոտավայրի հաշվարկի դեպքում կնշանակի արոտներն օգտագործվում են առանց համապատասխան պայմանագրեր կնքելու, որի դիմաց համայնքային բյուջե գումարներ չեն մուտքագրվում:

Հարկահավաքման հիմնական դժվարությունը համարում են բնակիչների արտագաղթը, սակայն մեկ անգամ իրականացված ծրագրի արդյունքները ցույց են տվել, որ անգամ նրանցից հարկերը գանձելը միանգամայն հնարավոր է հետեւողական աշխատանքի արդյունքում:

Ավագանին համայնքի բնակչությանը հարկային արտոնությունները տրամադրել է առանց հանձնաժողովի կարծիքն ունենալու: Զգալի գումարների զիջում է կատարվել, որի արդյունքում ոչ միայն այդքանով պակաս գումարներ են մուտքագրվել բյուջե, այլեւ այդ քաղաքականությունը չի նպաստում պարտաճանաչ հարկատուներ ունենալուն, անիմաստ է դարձնում հողի հարկի եւ գույքահարկի գանձումները կատարելու նպատակով համայնքներում ներդրված «Վեկտոր պլյուս» տեղեկատվական ավտոմատացված համակարգի գոյությունը, որով հաշվարկվում են նաեւ տույժերն ու տուգանքները:

ՆՈՐԱՏՈՒՍ ՀԱՄԱՅՆՔ

Տեղական բյուջեի աճին վերաբերող իրավիճակը

Նորատուս համայնքի բյուջեն 110 մլն դրամ է, որից սեփական եկամուտները՝ 18 572,4 մլն դրամ: Վերջին 5 տարիներին սեփական եկամուտներն աճել են մոտ 2%-ով: Վերջին 3 տարիներին համայնքում գործունեություն ծավալող տնտեսվարողների թիվն ավելացել է մեկով, որը զբաղվում է առեւտրով եւ տարեկան 7,5 հազար դրամ տեղական տուրք է վճարում:

Սեփական եկամուտների հավաքագրումը 2013թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ.
Հողի հարկ՝ հավաքագրվել է 67,5%:
Գույքահարկ՝ փոխադրամիջոցների համար՝ 74,9%:
Գույքի վարձակալությունից եկամուտների տարեկան պլանը՝ 2 մլն 310 հազար դրամ, որից փաստացի հավաքագրվել է 1,258,9 հազար դրամ:

Նորատուս համայնքի բյուջեի սեփական եկամուտների համալրման հիմնական միջոցը համայնքի պահուստային ֆոնդի հողատարածքների եւ ավազահանքի վարձակալությունից ստացված եկամուտներն են (հողատեսքերը ներկայացված են աղյուսակ 7-ում):

Աղյուսակ 7: Նորատուս համայնքի հողերն՝ ըստ նշանակության

	Համայնքի վարչական տարածքը	5300 հա
1.	վարելահողեր	2233,2 հա,
2.	Խոտհարք	476 հա
3.	արոտավայրեր	387,4հա
4.	անօգոտագործելի հողեր	100 հա
5.	ավազի հանք	30 հա
6.	արդյունաբերական հողեր	118,62 հա
7.	տրանսպորտի հողեր	16,36
8.	կապ, պաշտպանություն	45 հա
9.	այլ հողատեսքեր	1048,6 հա
10.	հատուկ պահպանվող տարածքներ	114,22 հա
11.	անտառային ֆոնդի հողեր	63,7 հա
12.	ջրային ֆոնդի հողեր	17,17
13.	սեփականաշնորհված հողեր	2234 հա
14.	պահուստային հողեր	336,76 հա

Վարձակալության տրամադրված

հողատեսքեր	**Առկա է**	**վարձակալության տրամադրված**	**արժեք**
վարելահող	2233,2 հա	233 հա	2, 200,000
ավազի հանք	30 հա	10 հա	55,000

Վարձակալված հողատարածքների թիվը վերջին տարիներին նվազել է, Նորատուս համայնքում գործող «Սերմնաբուծական տնտեսություն» ՓԲԸ-ն, որը վարձակալած 200 հա տարածքում աշորայի ցանքս էր իրականացնում, 3 տարի է, ինչ դադարեցրել է իր գործունեությունը:
Նորատուսի բնակչության հիմնական զբաղվածությունը անասնապահությունը եւ գյուղատնտեսությունն է՝ հացահատիկային կուլտուրաներ, առվույտ եւ այլն, սակայն հետաքրքրված չեն հողերի վարձակալությամբ, բնակիչների կեսը չի մշակում նաեւ սեփական հողամասը՝ պատճառաբանելով ցանքսի անարդյունավետությամբ: Նրանց ասելով՝ Կառավարության տրամադրած մատչելի գներով դիզվառելիքն ու պարարտանյութը շուկայական արժեքի համեմատությամբ չնչին տարբերություն ունի, հետեւաբար գյուղատնտեսությամբ զբաղվելու շահագրգռվածություն չկա: Գյուղում գործում է 3 ֆերմերային տնտեսություն՝ մինչեւ 30-40 անասնագլխաքանակ ունեցող, սակայն Նոարտուսի համայնքապետարանում ասում են, որ նրանք արոտավայրեր չեն վարձակալում ասելով, թե պատրաստի անասնակեր գնելն ավելի էժան է:
Համայնքի ղեկավարի աշխատակազմի ներկայացրած տվյալներով՝ 2011թ. եւ 2012թ.-ին համայնքի պահուստային ֆոնդի հողատարածքները վարձակալության տրամադրելու վերաբերյալ հայտարարություններ են հրապարակել, սակայն ոչ մի հայտ չի ներկայացվել մրցույթին:

«Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական պահուստի հողերը վարձակալության տրամադրել: Հայտարարությամբ տրված մրցույթը բոլոր կողերում համարել չկայացած, հայտեր չներկայացնելու պատճառով»:

2013թ.-ին համայնքապետարանը վարձակալության մրցույթներ չի հայտարարել:

Համայնքապետարանի աշխատակազմի տեղեկացմամբ՝ ոմանք ցանկանում են համայնքին վերադարձնել անգամ սեփական հողամասերը, քանի որ չմշակվող հողատարածքների համար անհարկի ծախսեր չեն ցանկանում կատարել՝ նկատի ունենալով հարկերը, սակայն համոզում են, որ չվերադարձնեն: Հողերի մշակման մեծագույն խոչընդոտ է ոռոգման ջրի բացակայությունը: Չնայած գյուղի միջով հոսում է Գավառագետը, սակայն գյուղը ոռոգման ցանց չունի: Ամռանը չափազանց դժվար է նաեւ խմելաջրի հարցը. գյուղում մի հոր կա, որի ինքնահոս ջրից օգտվում է ընդամենը մի քանի ընտանիք:

Այսուհանդերձ, առաջիկայում Նորատուս համայնքի սեփական եկամուտները նվազելու միտում ունեն.
ա/ համայնքի բնակիչների սեփականություն հանդիսացող խոտհարքները 2010թ.-ին, «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով փոխանցվել են սահմանակից Հայրավանք համայնքին: Նորատուսցիները շարունակում են հարկերը վճարել Նորատուսի համայնքային բյուջե, սակայն **04.10.2013թ.-ին Հայրավանքի համայնքապետ Դ. Բաղդասարյանը գրություն է ուղարկել Նորատուսի համայնքապետ Մ. Հարությունյանին եւ պահանջել համապատասխան հողի հարկը փոխանցել Հայրավանքի բյուջե:**

«2010թ.-ին ՀՀ վարչատարածքային բաժանման նոր օրենքով Նորատուսի բնակչությանը սեփականաշնորհված խոտհարքները փոխանցվել են Հայրավանքի վարչական տարածք: Գործող կարգի համաձայն՝ նշված տարածքի հողի հարկը պետք է վճարվի Հայրավանքի գյուղապետարանին, սակայն մինչ օրս Նորատուսի գյուղապետարանը մեզ չի տրամադրել 2462 ընտանիքների հողի հարկի բազան եւ ոչ մի դրամ չի մուտաքագրվել մեր բյուջե: Ուսումնասիրությունից պարզվել է, որ 525,4հա ընդհանուր տարածքից 469,5հա-ից սեփականաշնորհված է եւ ամեն տարի այն ամբողջությամբ հնձվում է: Խնդրվում է նշված տարածքի հողի հարկի բազան եւ հարկը փոխանցել Հայրավանքի գյուղապետարանին»:

բ/ «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին համայնքի հողերից տրամադրվել է 2400,28 հա, որոնք բնապահպանական հողեր են: Համայնքի ղեկավարի եւ ՊՈԱԿ-ի միջեւ պայմանագիր չի կնքվել, համայնքի ղեկավարի ասելով՝ ՊՈԱԿ-ը հողի հարկի գծով համայնքին հարկային պարտավորություն չունի:

ՀՀ կառավարության 10 դեկտեմբերի 2009 թվականի N 1438-Ն որոշում
2) «Սեւան» ազգային պարկի տարածքի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման համար «Սեւան» ազգային պարկ» պետական ոչ առեւտրային կազմակերպության կողմից գանձված վճարների ավելացված արժեքի հարկ վճարելուց հետո մնացած մասի առնվազն 30 տոկոսը պետք է փոխանցվի այն համայնքի բյուջե, որի վարչական սահմաններում գտնվում է տվյալ հողամասը՝ «Սեւան» ազգային պարկ» պետական ոչ առեւտրային կազմակերպության եւ համապատասխան համայնքի ղեկավարի միջեւ կնքված պայմանագրերին համապատասխան.

<u>Հարկային քաղաքականությունը</u>

ա/ Նորատուսի ավագանին որոշել է հողի հարկի եւ գույքահարկի տույժերը զիջել այն բնակիչներին, ովքեր մայր գումարը կվճարեն ամբողջությամբ: Ըստ այդմ՝

1. Նորատուս համայնքի ավագանին 11.01.2013թ. թիվ 17 որոշումով արտոնություն է տրամադրել համայնքի թվով 139 ընտանիքների՝ գույքահարկի գծով 874666 դրամ եւ հողի հարկի գծով՝ 630 ընտանիքի 777828 դրամի չափով:

2. Հարկերի հավաքագրման պլանում ներառված է միայն մայր գումարի ապառքի գանձումը:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող 387,4 հա արոտավայրերից պետական գրանցում չունի 387,3 հա-ը, որի հաշվարկային վարձավճարը կազմում է 726,2 հազար դրամ: Օգտագործված արոտավայրերից արոտի վարձավճար չի գանձվում, այն դեպքում, երբ համայնքը ունի 2021գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 331՝ մանր եղջերավոր, 35 ձի եւ 9 ավանակ:
4. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին տրամադրվել է 0,50 հա հողատարածք, տարեկան վարձավճարը սահմանելով 26,400 դրամ: Այնուհետեւ ավագանին 26.06.2013թ.-ի թիվ 14 որոշումով որոշել է. «Նորատուս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 3-րդ թաղամաս թիվ 1-3-4 հողամասը՝ կադաստրային ծածկագիրը՝ 05-071-0237-0175, մակերեսի չափը՝ 0,5 հա, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին (ջրամբար կառուցելու նպատակով):
5. Ավագանու 26.07.2013թ.-ի թիվ 15 որոշումով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա գտնվող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կողմից զբաղեցրած հողամասերը վերադարձվել են պետությանը:
6. 2013թ.-ին արտադրական նշանակության հողատարածքներ են օտարվել. հողերի շուկայական արժեքի գնահատում չի կատարվել: Օտարված տարածքների մեկնարկային գները սահմանվել են կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:
7. Գյուղում գործում է երկու մանկապարտեզ, յուրաքանչյուրում՝ 60 երեխա, որոնք ամբողջությամբ ֆինանսավորվում են համայնքի բյուջեից, սննդի համար ծնողներից վարձավճար չի գանձվում:



Բ/ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՌ 1 ՀՈՒՆՎԱՐԻ 2013թ

Խոշոր ընդամեն	2021	գլուխ, որից
կովեր	1043	
երինջ	654	
հորթ	324	
խոզեր	15	
ոչխարներ	331	
ձիեր	35	
ավանակ	9	
մեղվաընտանիք	155	
հավեր	10000	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հարկերի հավաքագրմանն ուղղված աշխատանքները.

Համայնքի ղեկավարի աշխատակազմում վկայում են, որ տարվա ընթացքում հարկերը հավաքագրում են 99%-ով, չնայած դժվարանում են արտագաղթած բնակիչների հարկերի հավաքագրման հարցում, սակայն անհատական աշխատանքի միջոցով հավաքագրումն իրականացնում են: Հողի հարկի մասով ընտանիքների ունեցած ամենամեծ պարտքը չի գերազանցում 30 հազար դրամը: Գույքահարկի մասով ապառքներ չեն կուտակվում:

Հարկերի հավաքագրումն իրականացվում է հետեւյալ կերպ՝

- «համոզում ենք, որ վճարեն,
- ծանուցում ենք ուղարկում մեկ անգամ,
- զանձում են տեղեկանքների համար դիմողներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱՏՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 17

11/01/2013

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել արտոնություն՝ գույքահարկի գծով 139 ընտանիքի 874666 /ութ հարյուր յոթանասունչորս հազար վեց հարյուր վաթսունվեց /դրամի չափով և հողի հարկի գծով՝ 630 ընտանիքի 777828/յոթ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր քսաներեք/ դրամի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Նորատուս համայնքի բյուջեի սեփական եկամուտների համալրման հիմնական միջոցը համայնքի պահուստային ֆոնդի հողատարածքների վարձակալությունից ստացված եկամուտներն են, սակայն համայնքի ղեկավարի աշխատակազմը գրեթե քայլեր չի ձեռնարկել այդ ուղղությամբ՝ այս տարի անգամ հայտարարություններ չեն հրապարակվել:

Անբնական չէ, որ համայնքի բնակչությունը հողագործությունն ու անասնապահությունը եկամտի միջոց չի դիտարկում մի համայնքում, որը ոռոգման ջուր եւ ջրի ցանց չունի, չնայած գյուղի միջով հոսում է Գավառագետը: Նորատուսը նաեւ խմելու ջուր չունի եւ այս պայմաններում,երբ համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում պետք է լինի նվազագույն կոմունիկացիաների ստեղծումը, համայնքի վարչական ղեկավարությունն ավելի շատ զբաղված է բնակիչներին սիրաշահելու քաղաքականությամբ:
Օգտագործված արոտավայրերից արոտի վարձավճար չի գանձվում, այն դեպքում, երբ համայնքը ունի 2021գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 331՝ մանր եղջերավոր, 35 ձի եւ 9 ավանակ:

Մանկապարտեզ հաճախող 120 երեխաների սննդի համար ծնողներից վարձավճար չի գանձվում, այն դեպքում, երբ մանկապարտեզի երկու շենքերից մեկը վերանորոգման եւ կահավորման կարիք ունի:
10 հա ավազահանքը շահագործվում է տարեկան ընդամենը 55 հազար դրամ վարձավճարով, որն ընդամենը 2 մեքենա ավազի արժեքն է:
Ավագանու մեկ որոշումով գույքահարկի եւ հողի հարկի արտոնություններ են սահմանվել՝ բնակիչներին զիջվել է 1,652,494 դրամ տույժերի գումարը, որը շատ ավելին է, քան սահմանված է «Գույքահարկի մասին ՀՀ օրենքի 15 հոդվածի 3-րդ կետով.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ:
Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը:
Համայնքի ավագանու կողմից գույքահարկի գծով սահմանված արտոնությունների գումարի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:

Հարկահավաքման ցուցանիշները ցածր են,որովհետեւ բնակչությունն իրազեկված չէ, թե ուր են նպատակաուղղվում իր վճարած գումարները, ինչ նպատակի են ծառայեցվում դրանք: Հարկերի վճարման, մարդկանց վճարելիք գումարների չափերի եւ դրանք վճարելու կարգի մասին բացատրություններ չեն տարվում,հարկերը վճարելու ճկուն մեխանիզմներ չեն կիրառվում, ինչպիսին կարող է լինել ամսավճարների բաշխումով բնակչության հարկային բեռի թեթեւացումը, բանկային եւ այլ միջոցներով վճարումներ կատարելը դյուրացնելը:

ՍԱՐՈՒԽԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Տեղական բյուջեի ամին վերաբերող իրավիճակը

Սարուխան համայնքը 2008թ.-ի ապառքների մարումից հետո շարունակել է համայնքային բյուջեն թերակատարել սեփական եկամուտների մասով: Համայնքապետրանի աշխատակազմում ասում են, որ ձեւավորված ավանդույթի համաձայն բնակիչները հարկերը վճարում են տարեվերջում, երբ վերադառնում են արտագնա աշխատանքից: Ըստ այդմ՝ համայնքը տարեկան հարկերի պլանը կատարում է տարեվերջում: Մինչդեռ,Գեղարքունիքի մարզպետարանի վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբը 2012թ·-ի փետրվարին Սարուխանում իրականացրած վարչական հսկողության ակտում փաստել է·

Սարուխան համայնքը 2010թ.-ին բյուջեի կատարումը չի ապահովել վարչական գանձումների մասով (58.6%): 2010թ.-ին տեղական տուրքերից եկամուտներ է նախատեսվել 500.0 հազար դրամ, այդ թվում՝

ա/ շենք-շինությունների շինարարության թույլտվության համար նախատեսված 100 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 5000 դրամ, բ/ ոգելից խմիչքների եւ ծխախոտի վաճառքի թույլտվության համար նախատեսված 250 հազար դրամի դիմաց՝ 421 հազար դրամ (նախորդ տարիների ապառքների գանձման հաշվին), հեղուկ վառելիքի (բենզին, դիզվառելիք) թույլտվության համար նախատեսված 150 հազար դրամի դիմաց՝80 հազար դրամ:

2011թ.-ին թերակատարվել են տեղական տուրքերի (40%) եւ հողերի վարձավճարների (72.1%) մուտքերի առաջադրանքները:

2011թ.-ի համար սահմանված 500 հազար դրամ տեղական տուրքերից գանձվել է 200 հազար դրամ:

ա/ Համայնքի ղեկավարը ոգելից խմիչքների եւ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն է տվել 19 առեւտրի սուբյեկտների՝ 320,000 դրամ ընդհանուր տարեկան գումարով, որպես տեղական տուրք համայնքի բյուջե է մուտքագրվել 66,000 դրամ:
գ/ համայնքի ղեկավարը հեղուկ վառելիքի մանրածախ առեւտրի կետերում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն է տվել մեկ տնտեսվարող սուբյեկտի՝ տարեկան 150 հազար դրամ վարձավճարով: Համայնքի բյուջե մուտքագրվել է 134,000 դրամ:

2012թ. հունվարի 1-ի դրությամբ 2010թ. դեռեւս մնում են չգանձված 85.0 հազար դրամ, 2011թ.-ից՝ 322 հազար դրամ, իսկ 2012թ. 1-ին եռամսյակում չգանձված 87,0 հազար դրամ տեղական տուրքեր:

2012թ.-ին սահմանված 500 հազար դրամ տեղական տուրքերից փետրվարի 15-ի դրությամբ մուտքեր չեն եղել:

2013թ.-ի համար պլանավորված է 500 հազար դրամից սեպտեմբերի 1-ի դրությամբ 150 հազար դրամ է մուտք արվել համայնքային բյուջե:

2013 թ.-ին համայնքում գործող 2 բենզալցակայաններից մեկը վաճառքի թույլտվության համար նախորդ տարվա համար սահմանված 150,000 դրամ տեղական տուրքից 70,000 դրամը չի վճարել, այս տարվանը նույնպես հոկտեմբեր ամսվա դրությամբ չէր վճարել:

Սարուխան համայնքի աշխատակազմի ղեկավարի խոսքով՝ տուրքերը նույնպես տարեվերջում են հավաքում՝ «ամռան ընթացքում գնում ես ուզում՝ նիսայի ցուցակն է ցույց տալիս, ասում ես՝ լավ, թող մնա աշուն, բայց պետական հարկերը ժամանակին է վճարում»:

ՏԻՄ-ը տեղական տուրքերի եւ վճարների գանձումն իրականացնելիս խախտել է «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը, այն է՝ ՏԻՄ-ի պաշտոնատար անձիք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում եւ տեղական տուրքը կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը՝ ելնելով սույն օրենքով սահմանված դրույքաչափերից:

Հողի հարկի եւ գույքահարկի ապառքները 2012թ. հունվարի 1-ի դրությամբ
Աղյուսակ 8

Ապառք	մայր գումար	տույժ
Հողի հարկ	59483.7 հազար դրամ	21728.7 հազար դրամ
գույքահարկ	16274.6 հազար դրամ (եւ տույժ)	

Ապառքների գոյանալու հիմնական պատճառներ են նշվում՝

- համայնքի բնակիչների բացակայությունը,
- արտագնա աշխատանքի մեկնելը,
- սեփականաշորհված հողատարածքները չմշակելը՝ գյուղից հեռու են, տղամարդկանց 70%-ը բացակայում է գյուղից, եւ քանի որ հողամասերը հեռու են, կանայք չեն կարողանում մշակել այն, բացի այդ, 4-րդ կարգի, անջրդի հողեր են,

- հիմնականում գարի եւ ցորեն են ցանում, սակայն վարուցանքն այնքան թանկ է, որ չի արդարացնում:

<u>Հարկերի հավաքագրման քաղաքականությունը</u>

- «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ նախագահի 2009թ. ապրիլի 7-ի ՀՕ-79-Ն օրենք կիրառելով, թվով 531 ֆիզիկական անձինք ստացել են 3150.0 հազար դրամի արտոնություն (տույժերից):
- Ավագանու որոշումներով 2010թ. համայնքապետարանի **աշխատակիցները 960 հազար դրամ պարգեւատրում-խրախուսանքներ են ստացել 2010թ. հարկահավաքի գործընթացին գործուն մասնակցության եւ լավ աշխատանքի համար:**
- 2011թ.-ին եւս համայնքապետարանի աշխատակիցները 995 հազար դրամ պարգեւատրում են ստացել հարկահավաքին գործուն մասնակցության եւ այլնի համար:
- Մինչդեռ, վերը բերված թվերը խոսում են այն մասին, որ բյուջետային պարտքերը բոլոր հարկատեսակների մասով ամեն տարի կուտակվել են եւ փոխանցվել հաջորդ տարվան: Սարուխան համայնքի ավագանին 2013թ-ի ապրիլի 4-ին որոշում է ընդունել «համայնքի 2012թ-ի բյուջեի սեփական եկամուտների կատարման համար մշակել հարկահավքման մեթոդներ եւ մինչեւ հաշվետու տարվա ավարտը համայնքի բյուջեն կատարել 100%-ով»:


...նախատեսված 504.3 հազ. դրամի դիմաց 504.3 հազ. դրամ-100%

Այլ եկամուտներ նախատեսված 375.0 հազ. դրամի դիմաց 640 հազ. դրամ կամ 170%

2. Համայնքի 2012թ. բյուջեի սեփական եկամուտների կատարման համար մշակել հարկահավաքման մեթոդներ և մինչև հաշվետու տարվա ավարտը համայնքի բյուջեն կատարել 100%-ով:

Իսկականի հետ ճիշտ է՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հարկերի հավաքագրմանն ուղղված աշխատանքները.

Տեղական հարկերը, տուրքերը եւ վճարները գանձելու համար՝

ա/ ծանուցագիր են ուղարկում ,

բ/ համայնքապետարանի աշխատակազմից խմբեր են ձեւավորվում, որոնք տարեվերջում հավաքագրում են հարկերը:

Դատական հայցեր չեն ներկայացրել, որը պատճառաբանվեց նրանով, որ բնակիչների հարկային պարտավորությունները 100,000 դրամը չի գերազանցում, եթե հասնի դրան՝ կդիմեն մարզպետարանին, որպեսզի նրանք դիմեն դատարան: «Իրենք են պահանջում, որ 100 հազար դրամից ավել պարտք ունեցողների անունները փոխանցենք իրենց: Ինչքան հնարավոր է բնակիչների հետ համոզելով, լեզու գտնելով ենք ուզում հարցը լուծել, գյուղ ա, քաղաք չի, որ նման բան անենք»:

Աղյուսակ 9: Համայնքային սեփականության հողատեսքերի քանակը եւ վարձակալության հանձնված հողերի քանակը

N	Հողատեսքեր	Համայնքային սեփականություն, հա	Տրամադրվել է վարձակալության	Տարեկան վարձավճարի չափը
1.	վարելահող	34.0 հա	6.92 հա (20.35 %)	83 հազար դրամ
2.	խոտհարք	31.64 հա		
3.	արոտավայր	2313.88	480 հա (20,7%)	1717
4.	Այլ հողեր	365.37		
	ընդամենը	2743.6	486,92 (17,7%)	1800

Վարձակալ ակ ան պայմանագիրն առկա է միայն 6.92 հա վարելահողի համար:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2013թվականի N

ՍԱՐՈՒԽԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա) Համաձայնություն տալ բաց դասական աճուրդով օտարել Սարուխան համայնքի վարչական սահմանների ներսում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հետեւյալ կադաստրային թաղամասերում եւ հետեւյալ հասցեներում գտնվող բնակավայրի տնամերձ հողամասերը.

Բ) Համաձայնություն տալ բաց դասական աճուրդով օտարել Սարուխան համայնքի վարչական սահմանների ներսում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հետեւյալ կադաստրային թաղամասերում եւ հետեւյալ հասցեներում գտնվող բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասերը.

Գ) Աճուրդ վաճառքով օտարվող բնակավայրի տնամերձ հողամասերի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողամասերի կադաստրային արժեքի 30%-ի չափով, որը 1քմ.-ի համար կազմում է 243 (երկու հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ, իսկ մասնակցության վճարը 3000 դրամ:

Դ) Աճուրդ վաճառքով օտարվող բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասերի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողամասերի **կադաստրային արժեքի 50%-ի չափով, որ**ը 1քմ.-ի համար կազմում է 405(Չորս հարյուր հինգ) ՀՀ դրամ, իսկ մասնակցության վճարը 3000դրամ:

Համայնքի բնակիչների հիմնական եկամուտը արտագնա աշխատանքն է: Այդ են համարում պատճառը, որ գյուղում անասնապահությունն ու գյուղատնտեսությունը զարգացած չէ՝ «1000 գլուխ անասուն ունենք ընդամենը»: Համայնքի պահուստային ֆոնդի հողատարածքների ընդամենը 5%-ն է տրվել վարձակալության: Կառավարության տրամադրած մատչելի գներով դիզվառելիքն ու պարարտանյութը էական փոփոխություն չեն մտցրել հողերի մշակման հարցում, որովհետեւ գյուղացին հող մշակելուց հետ է վարժվել եւ նրան կրկին հողագործությանն ընտելացնելը դժվար է: Համայնքապետարանն աջակցում է մեխանիզատորին, նրանց տրամադրում է 400-500 լիտր դիզվառելիք, որպեսզի հողը վարելու համար 3000-5000 դրամ քիչ պահանջեն գյուղացուց: Այս տարբերակով հողագործին աջակցելու համայնքապետարանի նախաձեռնությունը, նրանց ասելով, որոշ չափով գործում է:

Վարելահողերի, արոտավայրերի վարձակալության, աճուրդ-վաճառքների հայտարարությունները հրապարակում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: «Հողակտորներ կան, որ պահաջարկ ունեն, սակայն երբեմն մեկ հայտ է ներկայացվում եւ տեսնում ենք, որ այլ ցանկացողներ չկան, առաջարկում ենք մեկ դիմում էլ բերել այլ անունով, որպեսզի կայանա աճուրդը»: Վարձակալներն անգամ պայմանագիրը վաղաժամ դադարեցնելու նպատակ ունեն, երբեմն համոզում են, որ չհրաժարվեն:

Համայնքի սեփական եկամուտները նվազելու միտում ունեն՝

Համայնքում ոչ միայն վարելահողերի ու խոտհարքի վաճառք ընդհանրապես տեղի չի ունեցել, այլեւ մոտ 30 ընտանիք վերադարձրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող հողակտորները՝ վարելահողեր եւ խոտհարք, եւ միտումը շարունակվում է: Շատերին համոզում են, որ հրաժարվեն այդ մտքից: Համայնքապետարանը լրացուցիչ ծախսեր է կատարում սեփականության վկայականները կադաստրին վերադարձնելու համար: Ծախսերը կրկնակի են դառնում, հատկապես այն պատճառով, որ գյուղում մի ընտանիքը 06 հա հողամաս ունի, բայց այն բաժանված է մի քանի հողակտորների, որի համար հնարավոր է, որ նա մինչեւ 10-ը սեփականության վկայական ունենա:

2010թ. 4241 «մասնագիտական ծառայություններ» հոդվածով կատարվել է 1012.0 հազար դրամի ծախս: Համաձայն թիվ 1 վարչական ակտի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գավառի տարածքային ստորաբաժանումը պարտավորվել է համայնքի բնակիչներին սեփականաշնորհված հողամասերի հետ վերադարձման, դրանք որպես համայնքային սեփականություն գրանցելու եւ համայնքի անվամբ սեփականության իրավունքի վկայականների, ինչպես նաեւ անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրման աշխատանքներ կատարել:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2011թվականի N

ՀՀԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Համայնքի 2011թ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող 19000.0 հազ. դրամ հատկացումը, որն ուղղվել էր բաժին 04, խումբ 5, դաս 5 գործառնական դասակարգմամբ 5112 տնտեսագիտական/շենքերի եւ շինությունների կառուցում/ հոդված,պակասեցնել 4486.0 հազ. դրամով եւ ուղղել վարչական բյուջեի բաժին 01, խումբ 8, դաս 1 գործառնական դասակարգմամբ 4653 տնտեսագիտական հոդված /այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին /:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սարուխան համայնքի ղեկավարի աշխատակազմը 2010թ.-ին 960 հազար դրամի պարգեւատրում-խրախուսանք է ստացել «2010թ. հարկահավաքի գործընթացին գործուն մասնակցության եւ լավ աշխատանքի համար», իսկ 2011թ.-ին 995 հազար դրամ պարգեւատրում են ստացել: Սա այն դեպքում, երբ մարզպետարանի իրականացրած վարչական հսկողության արդյունքներով 2010թ.-ից սկսած համայնքապետարանը ոչ միայն չի կատարել հարկային պարտավորությունները, այլեւ այդ եւ հետագա տարիներին բոլոր հարկատեսակների, ինչպես նաեւ տեղական տուրքերի մասով կուտակել է հարյուրավոր միլիոնների ապառքներ: Նման իրավիճակում աշխատակազմին վատ աշխատանքի եւ անգործության համար պատժելու փոխարեն, հաջորդ երկու տարիներին արժանացրել են դրամական պարգեւի: Այն, որ աշխատակազմը չի կատարել իր պարտականությունները, դարձյալ փաստվում է ավագանու 2013թ.-ի ապրիլի 10-ին կայացրած որոշումով. «Համայնքի 2012թ.-ի բյուջեի սեփական եկամուտների կատարման համար մշակել հարկահավաքման մեթոդներ եւ մինչեւ հաշվետու տարվա ավարտը համայնքի բյուջեն կատարել 100%-ով»:

Համայնքի ղեկավարը տեղական տուրք վճարողների նկատմամբ իր չափազանց բարյացկամ վերաբերմունքով շարունակաբար խախտել է «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը: Բացի այդ,դրամաշնորհ է տրամադրել հարեւան համայնքին, երբ սեփական համայնքը բազում չլուծված խնդիրներ ունի, բացի այդ, համայնքը չունի գլխավոր հատակագիծ, հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաները կազմված չեն, որը պատճառաբանվել է գումար չունենալով:

Համայնքում տարածում ունի սեփական հողակտորներից՝ վարելահող, խոտհարք, հրաժարվելը: Վերադարձնելու արդյունքում համայնքապետարանը լրացուցիչ ծախսային պարտավորություններ է կրել:
Սարուխան համայնքի ղեկավարն ու նրա աշխատակազմը համայնքի ղեկակավարումն իրականացնում են ոչ թե ՏԻՄ եւ այլ օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում, այլ՝ տեղային, ավանդական պատկերացումներով, որի շրջանակում չի տեղավորվում անպարտաճանաչ հարկատուների դեմ դատական հայցեր ներկայացնելը: Ավելի տարօրինակ է այն, որ մինչեւ մինչեւ 100 հազար դրամ ապառքը ներվում է, իսկ 100 հազար դրամից անցնելու դեպքում մարզպետարանն է ստանձնում դատական կարգով բռնագանձում կատարելու պարտականությունը, որի իրավասությունը չունի:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի 5 համայնքներում՝ Գավառ, Սեւան, Վարդենիկ, Նորատուս եւ Սարուխան, կատարված հետազոտությունից պարզ դարձավ, որ չնայած համայնքների ղեկավարներին ներկայացվող պահանջներին՝ բարելավել իրենց վարչարարությունը, այն էական առաջընթաց չի ունեցել: Հարկերի հավաքագրումն, ըստ ներկայացված հաշվետվությունների, իրականացվում է 85-100%-ով, երբեմն ավելի, սակայն վերլուծությունները փաստում են, որ համայնքները նշված ցուցանիշն ապահովում են նախորդ տարիներից մնացած ապառքների որոշակի տոկոս հավաքագրելու հաշվին: Համայնքների աշխատակազմերը հետեւողական չեն ընթացիկ տարվա հարկերը հավաքագրելու հարցում եւ այդ է պատճառը, որ շարունակում են ընթացիկ պարտքեր կուտակել:

Ուսումնասիրված համայնքները ոչ միայն բավարար ջանքեր չեն գործադրել սեփական եկամուտները գանձելու համար, այլեւ լրջորեն չեն զբաղվել եւ հստակ քաղաքականություն չեն մշակել համայնքային բյուջեն սեփական ռեսուրսների հաշվին համալրելու ուղղությամբ: Համայնքապետարանները համայնքի պահուստային ֆոնդի հողատարածքները եւ գույքը վարձակալության տալու հարցում առանձնապես շահագրգռվածություն չեն ցուցաբերել եւ նրանց կատարածն ավելի շատ վերադասի պարտադրանքի ներքո արված քայլեր են: Սա հիմք է տալիս ասելու, որ համայնքներում վարչարարությունն իրականացվում է տարերայնորեն, եւ այն արդյունավետություն չի կարող խոստանալ:

Հետազոտության շրջանակում ընդգրկված 5 համայնքների հիմնական ռեսուրսը հողն է, որի չնչին մասն է օգտագործվում, իսկ դրանից ստացված եկամուտները չափազանց փոքր տոկոս են կազմում բյուջեում: Այն դեպքում, երբ ուսումնասիրված 5

համայնքներից մեկում՝ Գավառում, լուծված է կաթի իրացման խնդիրը, մյուսում՝ Վարդենիկում, գյուղմթերքի իրացման հարցը:

Ակնհայտ է, որ ֆերմերային տնտեսությունների քանակն ավելացել է, սակայն տարօրինակ է, որ վարձակալված գյուղնշանակության հողերի քանակը դրանից չի ավելանում կամ անասնագլխաքանակի թվի հարաբերակցությամբ վարձակալված արոտներն ու խոտհարքները չափազանց փոքր տոկոս են կազմում: Անբացատրելի է անասնագլխաքանակի ավելացման դեպքում խոտհարքներով ու արոտավայրերով չհետաքրքրվելը, ինչպես համայնքների աշխատակազմերում են վստահեցնում: Գեղարքունիքի մարզպետարանի վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբն արձանագրել է դեպքեր, երբ օգտագործվող հողերն օրինական ձեւակերպումներ չունեն: Դա նշանակում է, որ հողերն օգտագործվում են, պարզապես գումարները համայնքային բյուջե չեն մուտքագրվում: Ընդունված տարբերակ է համայնքի ղեկավարի հետ անձնական պայմանավորվածությամբ դրանք օգտագործելը, եւ այս համայնքների օրինակով կարող ենք ասել, որ այդ արատավոր երեւույթը շարունակվում է:

Նույնիսկ այն պատճառաբանությունները, որ ֆերմերային տնտեսություններն արոտավայրեր չեն վարձակալում ասելով, թե անասնակեր գնելն ավելի էժան է, չի կարող հիմնավորված լինել, քանի որ այն կարող է վերաբերվել անասնակերի ձմեռային պաշարին, բայց ամռան ամիսներին նրանք անպայման օգտվում են արոտավայրերից:

Հետաքրքական է, որ համայնքներն առանձնակի շահագրգռվածություն չեն ցուցաբերել հողատարածքները վարձակալության տալու հարցում, եւ այդ մասին արված հայտարարություններն ավելի հաճախ տարածվել են վերադասի կարգադրությունն անկատար չթողնելու նկատառումով, քան թե համայնքային բյուջեն մեծացնելու մտահոգությունից: Հայտարարությունները պարտադիր հրապարակվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, որն իր սահմանափակ տպաքանակի պատճառով հասանելի չէ հանրությանը, երբեմն էլ տեղական «Քյավառ» հեռուստատեսությունով:

Հայտարարությունները միայն նշված օրաթերթում հրապարակելը եւ տեղեկատվությունը տարածելու համար նախատեսված մյուս, համայնքի բնակչությանն առավել հասանելի տեղեկատվական գործիքներն այդ նպատակին չծառայեցնելը որոշ համայնքներ հիմնավորում են օրենքի պարտադրանքով: Մինչդեռ Հողային օրենսգրքի 68 եւ 78 հոդվածներով սահմանված է աճուրդների եւ մրցույթների հրապարակայնության ապահովումը, բայց ոչ դրանք պարտադիր «ՀՀ»-ում հրապարակելը: Մեկ այլ՝ «Հրապարակային սակարկություններ մասին» ՀՀ օրենքի 5-րդ եւ 21-րդ հոդվածները սահմանում են աճուրդների եւ մրցույթների հրապարակայնության կարգը՝ «... աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով եւ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ մրցույթն

սկսվելուց առնվազն 30 օր առաջ»: Ինչպես տեսնում ենք, պարտադրվող տարբերակը նույնիսկ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը չէ, այլ www.azdarar.am կայքը:

Բնակչության իրազեկման համար օրենքներով սահմանված գործիքները՝ տեղեկատվական ցուցատախտակները, պաշտոնական կայքերը կիրառում չեն ունենում կամ լայնորեն չեն կիրառվում: Պատահական չէ, որ օտարումների աճուրդները եւ վարձակալությունների բոլոր մրցույթներն անցել են երկու հայտերի պայմաններում՝ մեկնարկային գնին գրեթե ոչինչ չավելացնելով, երբեմն էլ վարձակալության են տրվել կամ օտարվել են ծիծաղելի արժեքներով:

Համայնքները լիարժեք չեն օգտագործում հրապարակայնությունն ապահովելու հնարավորությունները՝ հանրությանը մշտապես ներկայացնելու վարձակալության ենթակա հողատեսքերը եւ դրանց օգտագործման երկուստեք շահութաբերությունը: Համայնքներից մեկի աշխատակազմում խոստովանեցին, որ երբեմն իրենք են առաջարկում հայտատուներից մեկին ներգրավել երկրորդ դիմումատուին՝ մրցույթը կայացած ճանաչելու համար: Տեղեկատվությունը չափազանց սահմանափակ է, երբեմն համայնքային երկու կայքերի առկայության դեպքում դրանցից ոչ մեկը չի ծառայեցվում իր նպատակին եւ տպավորությունն այն է, որ այն ներդրվել է պարզապես ունենալու համար: Սույն հետազոտության շրջանակում ներառված համայնքներում իբրեւ տեղեկատվական գործիք, պաշտոնական կայքերը կիրառություն չունեն, մինչդեռ տվյալ համայնքների համար այն իրազեկման առաջին աղբյուրը պետք է լինի:

Համայնքներում հարկահավաքման դժվարություններ են նշվում բնակիչների արտագաղթն ու անվճարունակ լինելը, սակայն իրական պատճառն այն է, որ տեղական իշխանությունները հարկերի հավաքագրման հստակ քաղաքականություն չունեն: Նախորդ տարում «Քաունթերփարթ ինթերնեշնլի» հետ վերը նշված համայնքներից մի քանիսում իրականացված հարկահավաքման ծրագրի արդյունքները ցույց են տվել, որ անգամ հանրապետությունից հեռացածներից հարկեր գանձելը միանգամայն հնարավոր է հետեւողական աշխատանքի արդյունքում: Համայնքների ղեկավարների աշխատակազմում արդյունքները գոհացուցիչ էին համարում, հետեւաբար կարող էին այդ միջացառումները կրկնել տարեկան մի քանի անգամ՝ հարկահավաքության ցուցանիշները բարձրացնելու համար: Սակայն հարկերի հավաքագրման 2013թ-ի ընթացիկ ցուցանիշները խոսում են այն մասին, որ համայնքապետարանները հետեւողական չեն այդ հարցում: Լավագույն դեպքում այն ավարտվում է ծանուցումներ ուղարկելով, իսկ դատական հայցեր չներկայացնելը տեղական ավանդական պատկերացումներից դուրս է (վերը նշված 5 համայնքներից դատական հայցեր առաջին անգամ ներկայացրել է միայն Սեւանի քաղաքապետարանը):

Վարչարարական մեթոդներից առավել կարեւոր է բնակչության հետ թափանցիկ աշխատառճը եւ աշխատանքի արդյունքները նրանց տեսանելի դարձնելը: Կարծում ենք, խնդիրը վարչական կոշտ մեթոդներին չի հասնի, եթե համայնքների ղեկավարները հետեւողական լինեն իրենց գործունեության մասին հանրությանը իրազեկելու, ծախսումների վերաբերյալ բնակչությանը համակողմանի տեղեկատվություն տրամադրելու, ծախսումների առաջնահերթությունը որոշելիս համայնքի բնակչության տեսակետները հաշվի առնելու, նրանց համայնքային կառավարմանը մասնակից դարձնելու ձեւեր մշակելու եւ կիրառելու հարցում: Տեղական ինքնակառավարումն իրականացնողները բնակչության վստահությունը շահելու խնդիր ունեն եւ այդ ճանապարհով համայնքային կառավարման արդյունավետությունն անհամեմատ ավելի բարձր կլինի, քան վարչական մեթոդներով պարտադրանքի քաղաքականություն իրականացնելը:

Հարկերի վճարումները դյուրացնելու մեխանիզմներ չեն մշակվել, որը հնարավորություն կտար քաղաքացիներին տեղեկանալ իրենց ամսական վճարումների մասին եւ բանկային փոխանցումներ կատարելու հնարավորություններ ընձեռել: Սա կարեւոր է հատկապես այն առումով, որ համայնքից արտագաղթը բավականին մեծ թիվ է կազմում, իսկ այդ հանգամանքը հարկերը գանձելու գլխավոր խոչընդոտն է համարվում: Մարդիկ վարձակալել են հողը, իսկ հետո հեռացել են հանրապետությունից եւ դժվար է նրանց հայտնաբերելը, որպեսզի պարտավորեցնեն հարկերը վճարել: Բացի այդ, համայնքի բնակիչներից շատերը նույնիսկ տեղյակ չեն, որ հարկային պարտավորություններ ունեն (ինչպես Սեւանի քաղաքապետարանում տեղեկացրին՝ մարդ կա եկեղեցի է կառուցել, բայց հողի հարկը չէր վճարել, գտանք, ասեցինք, որ պարտք ունի, եկան վճարեցին):

Նշված փաստերը խոսում են այն մասին, որ հարկահավաքման քաղաքականությունը ճկուն չէ, համայնքում չբնակվողները պետք է բավարար իրազեկված լինեն տեղական իշխանությունների կայացրած որոշումների, իրենց հարկային պարտավորությունների, ինչպես նաեւ չվճարելու հետեւանքների մասին, հատկապես տուգանքներ եւ տույժեր կիրառելու մասով: Իրազեկելու պարտավորությունը համայնքային իշխանությանն է եւ միայն դրանից հետո իրավունք կունենան դատական կարգով բռնագանձում կատարելու կամ տույժեր կիրառելու:

Համայնքներում տեղադրված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը լիովին տալիս է այդ հնարավորությունը՝ «Ծառայություններ» բաժնում յուրաքանչյուրը կարող է տեսնել իր հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը եւ ցանկացած վայրից փոխանցումներ կատարել տրամադրված հաշվեհամարին, եթե համայնքապետարաններն օպերատիվ գործարկեն կայքը եւ այդ մասին իրազեկեն համայնքի բնակչությանը: Միանգամայն անօրինական է պատշաճ

իրազեկում չապահովելու պայմաններում տույժերի կամ հարկադրանքի այլ միջոցներով գումարների գանձումը: Սա հակասում է արդարադատության սկզբունքներին:

Ուսումնասիրված համայնքներում ավագանին հարկային արտոնությունները տրամադրել է անտեսելով օրենքի պահանջը: Հարկային արտոնություններ տրամադրելու որոշումները հիմնականում կայացվել են «Գույքահարկի մասին» եւ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներին հղում չկատարելով, նույնիսկ եթե հղում է կատարվել, ապա կիրառված դեպքերում այն բնավ օրենքի պահանջից չի բխել: Անտեսվել են նաեւ Կառավարության 19 մայիսի 1998 թվականի N 300 որոշման պահանջները, որով սահմանվում է համայնքի ավագանու կողմից գույքահարկի արտոնություններ տրամադրելու կարգը: Զգալի գումարների զիջում է կատարվել, որի արդյունքում ոչ միայն այդքանով պակաս գումարներ են մուտքագրվել բյուջե, այլեւ նույնչափով նվազել է պետական բյուջեից համայնքին տրվող դոտացիան: Այդ քաղաքականությունը չի նպաստում պարտաճանաչ հարկատուներ ունենալուն, անիմաստ է դարձնում հողի հարկի եւ գույքահարկի գանձումները կատարելու նպատակով համայնքներում ներդրված «Վեկտոր պլյուս» ավտոմատացված համակարգի գոյությունը, որով հաշվարկվում են նաեւ տույժերն ու տուգանքները:

Համաձայն Կառավարության հիշյալ որոշման՝ հարկային արտոնություն տրամադրողը կամ այն ակնկալողը պետք է հիմնավորի արտոնություն տալու անհրաժեշտությունը, մինչդեռ նշված բոլոր համայնքներում տեղական իշխանություններն այն կիրառել են բացառապես մի նպատակով՝ տարիների ընթացքում կուտակված հարկերը հավաքագրելու: Մեկնաբանությունների մեջ նրանք հենց այդպես էլ հիմնավորում են՝ 2008թ.-ից հետո հարկային պարտավորությունները չկատարած բնակիչները, եթե իրենց հորդորով ամբողջությամբ վճարում են մայր գումարը, նրանց զիջում են տույժերը, եթե չզիջեն՝ չեն վճարի: Մասնավոր ընկերություններին նույնպես զիջվել է շինությունների, փոխադրամիջոցների գույքահարկն ու հողի հարկը, որը բանավոր պատճառաբանվում է այդ ձեռնարկությունների պարապուրդով: Սակայն, ավագանու որոշումները պատճառաբանված չեն:

Ցածր վարչարարության մասին է խոսում նաեւ այն, որ համայնքներում բնակչությանը մատուցվող ծառայությունների համար գումարներ չեն սահմանվում կամ սահմանվելու պարագայում հետեւողականություն չեն ցուցաբերում դրանք հավաքագրելու հարցում, ինչպես օրինակ, աղբահանման, ջրամատակարարման, կոյուղու ցանցի շահագործման եւ այլ դեպքերում: Դա պատճառաբանվում է ցածրորակ ծառայություններ մատուցելով, որն էլ իր հերթին պայմանավորվում է ֆինանսների բացակայությամբ: Սակայն, թե ինչպես են բարելավելու մատուցվող ծառայությունների որակը, եթե ոչ խմելու եւ ոռոգման ջրի մատակարարման դիմաց հավաքագրված գումարներն այդ նպատակին ուղղորդելով, պարզ չէ: Նորատուս համայնքում մանկապարտեզ հաճախող 120 երեխայի համար վարձավճար չի գանձվում ծնողներից այն դեպքում, երբ այդ համայնքը խմելու ջուր չունի, ոռոգման ցանց չունի:

Նշված օրինակները վկայությունն են այն բանի, որ համայնքներում նվազագույն ենթակառուցվածքներ ստեղծելու իրենց պարտականությունը մի կողմ թողած, համայնքների ղեկավարները տարված են բնակչությանը սիրաշահելու

քաղաքականությամբ: Համայնքի ղեկավարի պաշտոնը չեն դիտարկում ծառայողական պաշտոն, որի խնդիրը օրենքով տրված լիազորությունները կիրառելով համայնքում կենսապահովման բարենպաստ պայմաններ ստեղծելն է: Համայնքում կառավարումն իրականացնում են սեփական հայեցողությամբ եւ անձնական պատկերացումներով՝ կառավարման չորս տարիներն ավելի շատ ծառայեցնելով հաջորդ ընտրությանը նախապատրաստվելուն: Համայնքի նյութական միջոցներն ավելի հաճախ ուղղվում են անհատական խնդիրների լուծմանը, քան թե ռազմավարական նպատակների իրագործմանը (եթե այդպիսիք կան), որի շահառուն կարող է ողջ համայնքը լինել: Վարչարարությունն ավելի շատ տեղային ավանդույթների վրա է հիմնվում, քան թե օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների:

«Մենք դատական պրոցես չենք սկսի՝ քյավառցին-քյավառցու դեմ 200-300 հազար դրամի համար դատարան չի գնա»: Այս կարծրատիպերի եւ ավանդական պատկերացումների արդյունքում Գավառի քաղաքապետարանը 2013թ. հուլիսի 1-ի դրությամբ մոտ 246 մլն դրամ ապառք է կուտակել եւ այն հավաքագրելու ուղղությամբ առանձնապես ջանքեր չի գործադրում:

Սարուխան համայնքում համայնքային ղեկավարումն իրականացնողները համայնքի ղեկավարի աշխատակազմին մոտ 1 մլն դրամով պարգեւատրել են հարկերը լավ հավաքագրելու համար, սակայն երկու տարի հետո որոշում են ընդունել այդ տարվա չհավաքագրած հարկերը հավաքագրելու մեխանիզմներ մշակելու մասին: Կամ՝ ավագանու որոշումով Սարուխան համայնքի բյուջեից դրամաշնորհ է տրամադրվել մեկ այլ համայնքի, երբ ինքը բազում չլուծված խնդիրներ ունի՝ համայնքը չունի անգամ գլխավոր հատակագիծ, որը պատճառաբանվել է գումար չունենալով:

Տրամաբանակա՞ն է օրենքի պահանջն անտեսելով, տեղական տուրքերն առանց գանձելու առեւտրի կամ այլ թույլտվություններ տրամադրելը տարվա սկզբում, իսկ գանձումները կատարելու համար սպասել տարեվերջին արտագնա աշխատանքի մեկնածների վերադարձին: Ընդ որում, անգամ այդ տարբերակով տեղական տուրքերը տարիներ շարունակ թերի են գանձվել եւ մի քանի տարվա ապառքները կուտակելուց հետո հաճախ տնտեսվարողը դադարեցում է գործունեությունը կամ լուծարվում, որի դեպքում անհնարին է դառնում ապառքների գանձումը:

Վարդենիկ համայնքում օրինակ, 2013թ.-ին 100 հա արոտավայրը վարձակալության է տրվել չափազանց խորհրդանշական արժեքով՝ 1 հա-ը 645 դրամով, ավելի պատկերավոր ասած՝ կես հակ խոտի արժեքով (1 հակ խոտը վաճառվում է 1300 դրամով): Այսինքն, այս քայլով համայնքի ղեկավարը պարզապես օրինականացրել է արոտավայրերի օգտագործումը, քանի որ 1 հա-ից գանձվող գումարի չափը ողջամիտ չէ: Մեկ այլ համայնքում՝ Նորատուսում, 10 հա ավազահանքը շահագործման է տրվել տարեկան 55 հազար դրամով, որը ամենանվազագույն գներով հաշվարկած, երկու բեռնատար ավտոմեքենա ավազի արժեքն է:

Հետազոտված 5 համայնքներին բնորոշ են նույն թերությունները՝

- տեղական իշխանությունների գործունեությունը թափանցիկ չէ, հրապարակայնությունն ապահովող գործիքները չեն կիրառվում կամ դրանց որոշ մասը կիրառվում է մասնակի:
- Բնակչությունն իրազեկված չէ, թե ինչ նպատակով են հավաքագրվում հարկերը եւ ուր են նպատակաուղղվում իրենց վճարած գումարները:
- Համայնքների ղեկավարները հարկերի գանձման քաղաքականություն չունեն եւ բոլոր 5 համայնքներում հարկերի գանձման միակ մեթոդը արտոնություններ տրամադրելով՝ տույժերը զիջելու ճանապարհով ապառքների հավաքագրումն է:
- Բնակչություն իրազեկված չէ իր վճարելիք հարկերի չափի, վճարման կարգի, պարտավորվածության եւ չվճարելու հետեւանքների մասին:
- Համայնքներից ոչ մեկում հարկային արտոնություններ չեն տրամադրվել սոցիալապես անապահովներին եւ չունեն անապահովությունը բնութագրող չափորոշիչներ, չնայած աշխատակազմերը ապառքների կուտակման հիմնավոր պատճառներից մեկն այդ են համարում:
- Համայնքներում արոտվայրերի ու խոտհարքների օգտագործումը հիմնականում չի հարկվում, իսկ ներկայացվող վարձավճարների չափերը ողջամտության սահմանում չեն:

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) պարտադիր գործարկումը ամրագրել իրավական ակտով,
- առաջարկել ՏԻՄ-երին՝ համայնքներ պաշտոնական կայքերում ապահովել տեղեկատավության օպերատիվությունը եւ նպաստել դրանց ճանչողությանը, որպես համայնքի վերաբերյալ առաջնային տեղեկատվության միջոցի,
- կրճատել գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալական ժամկետները եւ այն տրամադրել մինչեւ 10-15 տարի ժամկետով,
- սահմանելով արոտավայրի համար ողջամիտ արժեք եւ համայնքներում գանձումները կատարել 1 գլուխ խոշոր եղջերավոր անասունին 1 հա արոտավայր սկզբունքով,
- ապահովել համայնքի բնակիչների նոտարական գործարքների եւ ՔԿԱԳ գրանցումների տուրքերը տվյալ համայնքի բյուջե փոխանցելու մեխանիզմները,
- առաջարկել ՏԻՄ-երին մշակելու հարկային վարչարարության արդյունավետությունն ու թափանցիկությունը ապահովելու մեխանիզմներ, որը կնպաստի նաեւ ՏԻՄ-երի նկատմամբ վստահության բարձրացմանը,
- առաջարկել ՏԻՄ-երին՝ մշակել հարկահավաքման ճկուն մեխանիզմներ, որը հնարավորություն կտա բնակչությանը իրազեկել հարկային

պարտավորությունների, հարկերի համաչափ վճարումների մասին, ինչպես նաեւ հաշվի առնելով հետազոտության շրջանակում ներգրավված համայնքներում առկա բնակչության մեծ թվով արտագաղթը՝ ընդլայնել վճարելու հնարավորությունները՝ ցանկացած վայրից փոխանցումներ կատարելու հնարավորություն ստեղծելով,

- հարկերի գանձումների հարցում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար խթանել բանկային վճարումները,
- հարկահավաքման ցուցանիշները բարձրացնելու համար հարկերի հավաքագրման նպատակների ու կարեւորության մասին իրազեկելու եւ քարոզչություն ծավալելու նպատակով պարտադիր դարձնել համայնքային ժողովների հրավիրումը, ԶԼՄ-երով քննարկումներ եւ քարոզչական հաղորդումներ իրականացնելը,
- առաջարկել համայնքների ղեկավարներին՝ կազմել եւ ավագանու հաստատմանը ներկայացնել հարկերի գանձման տարեկան միջոցառումները եւ դրանց իրագործման ուղղությամբ եռամսյակային եւ տարեկան հաշվետվությունների ներկայացումը ավագանուն,
- «Գույքահարկի մասին» եւ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով արտոնությունների տրամադրումն իրականացնել անհատական ուսումնասիրությունների եւ ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվճարունակությունը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:
- հստակեցնել հողի հարկի եւ գույքահարկի տվյալների շտեմարաններում առկա անճշտությունները,
- համայնքի բոլոր բնակիչներին հարկման դաշտ բերելու եւ բնակիչների միջեւ հարկման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով ժառանգությունը փաստացի տիրապետող, սակայն այն դե յուրե չվավերացնող անձանց հարկային պարտավորություններից խուսափելը բացառելու միջոցներ ձեռնարկել,
- «Սեւան» ազգային պարկ» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը հողեր հանձնած համայնքների ղեկավարներին առաջարկել պայմանագրով ամրագրել հողամասերի օգտագործման համար համայնքների վճարվելիք տոկոսները:

7. Օգտագործված գրականություն

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ

ՀՀ հողայի օրենսգիրք

«Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենք ,

«Հարկերի մասին» ՀՀ օրենք,

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ,

«Գույքահարկի եւ հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին»,

«Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության

ՀՀ կառավարության 19 մայիսի 1998 թվականի N 300

ՀՀ կառավարության 10 դեկտեմբերի 2009 թվականի N 1438-Ն

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական հսկողության ակտեր 2012թ; 2013թ.

Քաունթերփարթ Ինթերնեշնլ-«ՀՀ համայնքների բյուջեների սեփական մուտքերի գանձման մակարդակի վրա 2012թ. ընդունված ՀՀ օրենսդրության կիրարկման ազդեցության համալիր գնահատում եւ ՏԻՄ-երում հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղղությամբ եզրակացությունների եւ առաջարկությունների ներկայացում»-հեղինակ՝ Վահրամ Շահբազյան, 2013թ.

1. www.parliament.am
2. www.mta.gov.am
3. http://gegharkunik.gov.am/
4. www.infosys.am
5. http://noratus.am
6. http://vardenik.am

Հավելված 1

ՑԱՆԿ

Ծրագրում ընդգրկված մոդելային համայնքներն ըստ տիպերի եւ բնակչության թվաքանակի

Հ/հ	Մարզը	Համայնքը	Համայնքի տիպը	Բնակչության թիվը
1	**Գեղարքունիք**	Գավառ	Քաղաքային	25,742
2	Գեղարքունիք	**Մեւան**	Քաղաքային	24060
3	Գեղարքունիք	Վարդենիկ	Գյուղական	9,909
4	Գեղարքունիք	**Նորատուս**	Գյուղական	6825
5	Գեղարքունիք	**Սարուխան**	Գյուղական	8725